



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1968

1999

Տ. Ա. 50264
Հայոց պատմական կոչությ.

Ա Պ Ե Վ Ո Տ Ե Լ
Հայոց Ա Յ Թ Օ Ւ Խ
(Ա. Պ Ո Յ Ը)

Ա Յ Ա Ս Ա Ա Ի Բ Ե Ց

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՆՈԶԱՐԵԱՆՑ

— — —

Տ Փ Խ Ի Ս

Տարածան Յովհաննիսի Աստվածածնից:

1877

Հ. Բ. Տ Ա Զ Ե Ւ

Ա Ն Ե Կ Գ Թ Օ Տ Հ Ե Ր

Հատոր II.

(Ա. Գործ)

Ա Շ Լ Ա Ս Ա Մ Ի Ր Ե Ց Ց

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ



28249-62
Տ Փ Խ Ի Ս

Տպարան Յովհաննիսի Մարտիրոսեանց:

1877

Անհերթ առաջիկ առ պատճեն առ պատճեն 181
Համարում ուղղել հետեւալ սխալները:

Յառաջաբանի առաջին երես. վերջեց 7-դ տողում գլուխած է. «Ճանաչում էր»—պէտք լինէր՝ ճանաչուելու.

- 14 երես. երրորդ անեկտօտ. «Թեքէք»—լինէս.
- 18 եր. չըրրորդ անեկտ. «կալառուչին»—չայտառին.
- 35 եր. երկրորդ ան. «աստեղեր»—աստեղը.
- 40 եր. երկր. ան. «նորանից»—նորանից.
- 57 եր. 7-դ տող. «Եւ ինձ համար»—Ես ինձ համար.
- 59 եր. 3-դ տող. «մօտեղքայր»—մօտեղքայր.
66. վերջին տող. աների»—դաշտերի.
68. երկր. ան. վերջին տող. «արանից»—պանչէց.
77. վերջին տող. «թուփանքս»—թվանքս.
89. 8-դ տող. «վառարանից»—վառարանին.
94. 8-դ տող. «այլ լուէ»—այլ որ լուէ.
102. վերջ. ան. 3-դ տող. «մարդիկներ»—մարդեկներ.
107. 4-դ տող. «պատասխանեց ամանը»—պատասխանեց՝ «աման».
109. երկր. ան. 7-դ տող. «Քարիտի»—Քարիտի.
- և 8-դ տող. «շտապի»—շտապի.
- 110. վերջ. տող. «մի՛թէ ես ցածութիւն կ'անեմ»—մի՛թէ ես այդպիսի ցածութիւն կ'անեմ.
120. երկր. ան. 6-դ տող. «կողմից, խերուրդիքական»—կազին, խերուրդիքան.

Дозволено цензурою. Тифлисъ, 23 Июля 1877 г.

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԴՐ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԴՐ



23. 1470

Տ. 27388 1468. 600

Օ-

Tipografija Martirosianca, na Orbelianovskoj ulicѣ № 5.

129. երկր. ան. վերջ. տող. «ո՞ւ...»—ու...
131. վերջ. ան. 2-դ տող. «մարիզում»—Փարթշում.
142. երկր. տող. «ախուռապէտ»—ախուռապէտ.
151. առաջին ան. վերջին խօսք «դիւմով»—ույց-
հալ (ժօնմօ).
172. վերջ ան. 1-ն տող «Այն միջոցին նապօլէօնը»
—Այն մընային, ելք նապօլէօնը.
179. առաջ. ան. 1-ն խօսք «Դամբուրգ»—Գամբուրգ.
204. առաջ. ան. 11-դ տող «դուրս կանչեց մուշ-
տայիդին և ասաց»—դուրս կանչեց մուշտայիդին,
Ֆէ ապառէ ինչեց նորս երեսին և սասայ.
215. 19-դ տող «քանելով»—բանելով:

Պ. ԳՐՉԻՆ.

«ՓՈՐՁ»-ի լի համարում, մեր «ԱՆԵԿՈՑՆԵՐ»-ի
1 հասորի վերաբերութեամբ կարդացինք Պ. Գրչիննադասութիւնը: Յայտնելով մեր չնորհակալու-
թիւնը Պ. Գրչին, հարկաւոր ենք համարում հրա-
ւիրել նորա ուշադրութիւնը մի քանի նկատղու-
թիւնների վերայ:

Կատ փոքր խօսելով՝ զրբի բովանդակութեան
և նորա լաւ կողմերի վերայ, Պ. Գրին իւր ուշա-
դրութիւնը կենդրոնացնում է միայն գրքի թերու-
թիւնների վերայ: Չնայելով, որ դա մեծ բարեկա-
մութիւն է, քննադասողի կողմից և միշտ ունի իւր
օգտակար հետևանքները, այսու ամենայնիւ, լինելով
միակողմանի և անկատար՝ ունի նաև իւր վնասակար
հետևանքները: Ճշմարիտ քննադասողի պարուաւո-
րութիւնն է ներկայացնել ընթերցողին քննադասելի
Դիւքը ինչպէս իւր թերութիւններով, այնպէս և ար-
ժանաւորութիւններով: Այս կետը, որ քննադասու-
թեան զիսաւոր պայմաններից մէկն է, զանցառու-
թեան է արուած Պ. Գրչին կողմից: Բայց, գուցէ, մեր
դիւքը ոչինչ արժանաւորութիւն չ'ունէր մեր քննա-
դասի աչքում,—այդ թողնում ենք ընթերցողների
դատաստանին:

Հետևեալ անեկդօտից պարոնը եզրակացնումէ,
թէ մենք ծիծաղում ենք երեխայի թրվատութեան
վերայ:

«Մէկը և միւսը Յ տարեկան երեխաներ կանգ-
նած էին տանիքի վերայ և նայում էին դէպի մօ-
տակայ հարսանիքի տունը, որտեղ փող էին փշում:

Երեխաները ցրաից դողում էին:

— Դիգօլ մըում են, — հարցրեց մէկը:

— Յէ, ցեմ մըում, — ասաց միւսը:

— Ալսակ, գուն մըում են:

— Յէ, ես էլ ցէ: — »

Չ'ենք հասկանում՝ ի՞նչ տեղեց է վեր առել
Պ. Գրին այն միտքը, թէ, գրելով այս անեկդօտը՝
մենք ծիծաղում ենք երեխայի թրվատութեան վերայ:
Մենք երեխաներին խօսեցրել ենք այն լեզուով, ո-
րով նոքա խօսում են այդքան փոքր հասակում:
Մենք ոչ թէ ծիչ աղում ենք երեխայի բնական պա-
կասութեան վերայ, այլ մեզ ծիծաղեցնում է այն
հանգամանքը, որ նոքա ցրտից դողում են և փողա-
հարութեան սիրոյ համար ուրանում են ձմարառու-
թիւնը: Եւ, վերջապէս, նոցա արտասանութիւնը ոչ
թէ նոցա թրվատութիւնն է ցոյց է տալիս. այլ՝ թէ
նոքա գեռ այնքան փոքր են, որ հնչւնների արտա-
սանութիւնը տակաւին չէ զարգացել նոցա մէջ:

Պ. Գրին ասում է. «թե երը պատռուեց» —
սխալ է և ուղղում է: Զարմանում ենք, ինչպէս պա-
րոնը թոյլ է տուել իւրեան նկատելու մեզ այն սխալը,

որ հազիւ թէ ներելի է փոքրիկ երեխաներին: Կար-
ծում ենք, մեծ գիտութիւն չէր հարկաւոր խմանա-
լու, որ ենթական թուով համաձայնում է իւր ստո-
րոգեալի հետ: Բայց, Պ. Գրիչ դա սխալ չէ, ինչպէս
կարծում էք, դա ժողովրդական զարձուած է: Այդ-
պէս է խօսում ժողովուրդը, մենք ևս այդպէս պէտք
է խօսեցնենք նորան: Եւ մի՛թէ չէք լսել ժողովրդի
բերանում այս խօսքերը. «Ոտքերս ցաւում առ Սրբներս
ուղղում էր — Գլուխներս պատրուեց» և այն:

Մի փոքր յառաջ է գնում Պ. Գրիչ և ահա
գանում է հետևեալ անկանծնութիւնը. «մեր անեկ-
դօտները զարկ կ'տար» — այդ սխալ է, ասում է պա-
րոնը և աւելացնում է՝ պէտք է գրել «մեր անեկ-
դօտները զարկ կ'տային»: Այդ շատ ճիշդ է: Բայց,
Պ. Գրիչ ինչո՞ւ չէք կամենում տեսնել որ Անեկ-
դօտները խօսքը՝ գրքի անունը լինելով, զրուած է
չակերտների մէջ: (Այդ էլ մեր բաղադրիցն է, որ զրա-
շարը չէ մառացել չակերտները:) Համոզուելու հա-
մար, որ գուք սխալուած էք, ինզրում ենք, նեղու-
թիւն քաշեցէք մեզ անգամ ևս նայելու այդ նախա-
դասութեան վերայ մեր յառաջաբանումն:

Իսկ միւս տառասխալները, որոնք յառաջ են ե-
կել գրաշարի կամ սրբագրողների անհոգութիւնից,
այնքան աննշան են, որ կարօտութիւն չենք զգում
նոցա մասին մեզ արդարացնելու մեր քննադատողի
առաջեւ: Միայն հարկաւոր է աւելացնել որ մենք
Ագուլիսումն էինք, իսկ մեր աշխատութիւնը Բա-

գլուխն էր տպագրվում: Զկարողանալով անձամբ հսկել մեր գրքի սրբագրութեան վերայ, ինչպէս յիշել ենք նորա վերջին երեսումը, զորա մասին ինդարել ենք երկու յարգելի անձանց հոգացողութիւնը, որոնք, կամայ թէ ակամայ, առիթ են տուել մեր քննադատողին շատ անտեղի նկատողութիւններ անելու մեզ:

Մեր քննադատողի արած սխալներից վերջինն այնքան խոշոր է, որ մեղթոյլ չենք տալիս կարծելու, թէ յիրաւի, նա մինչև այդ աստիճանի անհասկացող է: Մենք այդ սխալը վերաբերում ենք այն հանդամանքին, որ նա շտապով է դրել իւր քննադատութիւնը: Դա այն վատ յատկութիւններից մէկն է, որոնցից պէտք է խորշի ամեն բանիմաց քննադատող:

Շտապով շինած գործը միշա սխալներ կ'յառաջացնի:

3. Նազարեանց.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«ԱՆԵԿԻՑՑՆԵՐ»-ի I հատորին ոչոք գրաւոր կերպով նիւթ չէ հաղորդել: Այլ նորա մի մասը մեր թարգմանութիւնն է, միւսը՝ մեր լաածները: «Նա բովանդակում է իւր մէջ 535 անեկդօտ, որի $\frac{1}{5}$ մասը մեր կեանքից է աւնուած:

Ումենայն տեղերից, ուր ուղարկեցինք «ԱՆԵԿԻՑՑՆԵՐ»-ը, գրում էին մեզ թէ համակրելով կարգում են այդ գիրքը և զուարձանում: Մեր նպատակին հասնելու պայմաններից առաջինն էլ այդ է, որ մեր գիրքը կարգան և զուարձանան: Սա մի երաշխաւորութիւն է մեր ընթերցողների կողմից, որ խոստանում է, թէ ապագայ հատորներն են առաւել պէտք է արձարծեն ընթերցանութեան սկզբ նոցամէջ, որոնք փոքր ի շատէ կարգալ գիտեն:

Մենք խոստացել ենք II հատորը կազմել միայն մեր կեանքից առած անեկդօտներից: Բայց, որովհետեւ այդպիսինների թիւը շատ փոքր էր, ուստի այս հանդամանքը մեղ առիթ տուեց կրկին օտարազգի անեկդօտներին գիմելու: Այս հատորի մէջ կայ 366 անեկդօտ, որից 145-ը մեր կեանքից է առնուած, 224-ը՝ օտար ազգերի կեանքից:

Պէտքէ ամեն ժողովրդի մէջ անեկդօտներ կան.

բայց գլխաւորապէս այն ժողովուրդներն են հարուստ նորանցով, որոնք տակաւին նահապետական կեանքով են ապրում: Մեզանում, որքան մեզ յայտնի է, այդպիսի ժողովուրդ համարվում են՝ Վաղախեցիք, Վարաբաղցիք, Մշեցիք, և այլն: Մեզ հաւատացնում են, որ անեկդօտների հանքերն այդ ժողովուրդների մէջ պէտք է որոնել: Բայց, յաւելով պէտք է ասենք, որ գրէթէ դոցա կեանքից անեկդօտներ չ'ունինք, — այնքան ստակաւ են մեզ հասածները: Յանկալի էր, որ գրականութիւնով պարապող անձինք ուշադրութիւն դարձնէին այդ ժողովուրդների վերայ և մեզ նոցա կեանքից անեկդօտներ ուղարկէին: Դորանով նոքա մի մասնաւոր ծառայութիւն արած կ'լինէին Ազգին: Այստեղ յայտնելով մեր հրապարակական շնորհակալութեան հաւաստիքը մեզ նիւթ ուղարկողներին, յոյս ունինք, որ նոքա կ'շարունակեն աշխատակցելու սորա միւս հատորները կազմելիս:

Բայց գրողներից ինդիւմ ենք, որ առանձին ուշադրութիւն դարձնեն տեղական բարբառների վերայ և ժողովրդական խօսքերը զրեն ճիշդ այնպէս, ինչպէս գործ են ածկում: Իսկ եթէ օտարազգի բառեր էլ մտածեն, պէտք է զրել նաև նոցա հայերէն նշանակութիւնը:

II Հատորը բաժանեցինք երկու մասն: Առաջին մասնում ժողովեցինք ազգային անեկդօտները, երեսորդում՝ օտարազգի անեկդօտները: Ազգային անեկ-

դօմների մէջ մասնաւոր անձն է Շուն-Գալուստ (^(*)): Իսկ օտարազգի անեկդօտներում՝ Սոկրատէս, Թաղէս, Անաքսիմիշօն, Մոլլա-Նասր-Էդղին, Աղէքսանդր-Մակեդոնացի. Նապօլէօն I, Ֆրանցիսկ I, Աղէքսանդր I, Ֆրեդերիկոս II, Կարոլոս II, Հենրիկոս III, Գուլստան III, Հենրիկոս IV, Լուդովիկոս XIV, Լուդովիկոս-Նապօլէօն, Մեծն-Պետրոս, Բալակիրէվ, Միլան, Ֆրանկլին, Զօնսօն, Լորիի, Ժան-Բատիստ-Ռուսսօ, Վայլտէր-Սկոտ, Բէդ:

Գրքի վերջումն, իբրև յաւելուած, զետեղեցինք այնպիսի հետաքրքրական անցքեր, որոնք թէպէտ ոչ զուարձախօսութիւններ են և ոչ սրախօսութիւններ, այսու ամենայնիւ մէկ առանձին յատկութիւն ունենալով, գարձեալ վերաբերվում են անեկդօտների շարքին:

Աւելորդ ենք համարում յառաջ բերել այստեղ այն բոլոր գրքերի անունները, որոնցից մենք օգուտ ենք քաղել այս հատորը կազմելիս: Նոցանից զլիսաւորներն են՝ «Милліонъ», а можетъ быть, и менеъ анекдотовъ,... — С. Петербургъ. 1874 годъ». և «Ха! ха! ха! Собрание юмористическихъ анекдотовъ. М. Е. Москва. 1872 г.»

Յուսով ենք, որ մեր օգնականների աշխատակ-

(*) «Շուն-Գալուստ» մականունը կրում էր Ներքին-Ազուբցի Մանտեսի Գալուստ Տէր-Ցովնանիսեանց, որ վախճանուեցա 1874 թ. Յուլիսի 7-ին, մօտ 70 տարեկան հասակում:

սաց քահանան և այդքան մազ հանեց: Արթին,
որ բաւական ցաւ զգաց, ասաց.

— Յանուն և 'ի պատիւ քսան և չորս մարդարէից,
— և այդքան մազ հանեց:

Քահանան, տեսնելով, որ ռաբբին ցաւեցրեց
իւր ծնօտը, ձայն տուեց.

— Եւ վասն երկու բերուց, որք այլեցան յեկե-
ղեցին նիկօմիդիոյ. և աւելացրեց՝ «Անիծուած, քո
մօրուքիւդ մէջ ես որտեղեց պիտի դանեմ այդքան
մազ, որ քաղեմ...»

* *

Սոր-հարսի մօտ բերում են մի ճնկատանոց և
առաջարկում են, որ տուած կտորի վերայ նորա
նմանը կարի: Հարսը համաձայնում է: Նա առնում
է երկուսը միասին, նստում է մէկ անկիւնում և ճա-
կատանոցի կարուածքի վերայ նայելով՝ խօսում է:
ինքն իւր հետ.

«Փէսը տարած, դէնը բերած,

«Քու կարողի հէրը մեռնի,

«Ախը, էս ո՞նց ա կարած»:

* *

Այդիների մօտից անցնելով՝ մէկը լսեց, որ նո-
ցանից մէկում մի մարդ կայ: Նա խնդրեց, որ իրան
մի Ճիթ խաղող տան: Այդինում ման եկողը կտրեց մի
Ճիթ խաղող և, կոթը դռան Ճեղքից դուրս տա-
նելով, ձայն տուեց.

— Բաշի:

— Շատ շնորհակալ եմ, — ասաց անցաւորը առե-
սկսեց քաշել խաղողի կոթից: Իսկ ներսի կողմից,
կարողը իւր շորի փէշը բռնելէր Ճթի տակը և խա-
ղողի պառւղները նորա մէջն էին թափվում: Երբ
անցաւորը դուրս քաշեց մերկացած կոթը, ձայն
տուեց.

— Մուղղբախ, ախը պառւղներից տուր էէ...»

— Դու մրտեղեց գիտէիր, որ ես մուղղբախ եմ, —
հարցրեց զարմանալով այգիի տէրը:

— Եթէ մուզի չնէիր, — ասաց անցորդը, — դու
ես բանը չէիր կարող անել:

* *

Կամենալով Զատկին նոր շոր հագնել մի շատ
խեղձ մարդ զանազան գոյնի նոր շորերի կտորտանք
Ճարեց և կարկատանքի պէս տեղ-տեղ կարեց. իւր
մաշուած ու պատառոսուած շորի վերայ: Եկեղե-
ցում, ծանօթը նորան տեսնելով, ասաց.

— Օհօ, թազա շոր ես հագնէլ. աւշ-աւշ շնչաւոր
ըլլի, տօօօ...»

— Շնորհակալ եմ, օբլ-մէջ ապրես, — պատասխա-
նեց* խեղձ մարդը:

* *

Գիւղացու արտը մէկ ուղտ էր մտել: Գիւղա-
ցիները մտածում էին, թէ ինչպէս նորան դուրս ա-
նեն արտից, որ հասկերը ոաների տակը չ'արորի: Եր-

կար մտածելուց յետոյ նոքա մի թոկով կապեցին
ուղտի ոտները և ութ հոգւով դուրս թրեցին
արտից:

* * *

* * *

• Փաշանան, մի մարդու խոստովանելով, հար-
ցըրեց.

- Ի՞նչ ես գողացել որդի:
- Ոչինչ, տէր-տէր, մի թոկ:
- Թօնիի ծերին ի՞նչ կար:
- Ա՞ի ձի:
- Զիու վրայ ի՞նչ կար:
- Ա՞ի խուրջին, մի մարդ:
- Խուրջինն ի՞նչ արիր:
- Տուն տարայ:
- Զին ի՞նչ արիր:
- Գումը տարայ:
- Արդին ի՞նչ արիր:
- Ապանեցի:

* * *

Տեսնելով, որ աշակերտը չե կարողանում ճա-
նաչել տառերը, վարժապետը զբատախտակի վերայ
գրում է.

Ա. Բ. Գ. Դ.

այբ, բէն, գիմ, դա.
Յետոյ, ցոյց տալով աշակերտին առաջին տառը
հարցնում է.

— Ասա, էս ի՞նչ գիր է:

— Բէ՛ն! պատասխանում է աշակերտը:

— Տօ յիմար, էս բէն էն, — բարկանալով ասաց
վարժապետը, — չես տեսնում, որ անունն էլ տակը
գրել եմ:

* * *

Օ Երեխան գուանը նստած ուտում էր իւր հօր
քէլէսի փլաւը: Մէկ ուրիշ երեխայ, մօտենալով նո-
րան, մի փոքր փլաւ խնդրեց: Բայց, երբ առաջինը
ոչինչ չտուեց,

— Լաւ, լաւ, մի տա, — ասաց երկրորդը, — Աս-
տուած օղորմած է, հալրաթ մէկ օր էլ իմ հայրս
կմեռնի, տես, ես էլ քեզ փլաւ կտամ:

* * *

Մի քանի մարդիկ հաւաքուել եին և կամե-
նում էին ձեռքի բարձրացնելով իմանալ գոմշի կտ-
շուի ծանրութիւնը: Մէկն ասաւմ էր՝ Ծ փութ կլի-
նի. միւսը՝ թէ Ծ փութ կլինի: Վերջապէս երրորդը
մօտեցաւ, բարձրացրեց կաշին երկու ձեռով և մի քըն-
նողական գէմքով վճռողապէս ասաց.

— Ես կաշին կլինի՝ Յ փութ, մէկ լիտը, 7 գրո-
վանքա և 1 մախալ ու կես:

* * *

— Արտիրոս, ումը գանդատուեցիր ձեր գործի
մասին:

— Առղբովին:

— Արտաղ! թողելէ գեօպալը նաչալնիկը, գնացել մողրովին է գանդատ արել:

* *

Օ Հայրն ասում էր.

— Որդի, եա դու գնա, տաւարն արածացրու, ես գնամ փլաֆն ուտեմ, չէ. չես ուզէ, ես կ գնամ փլաֆը կ'ուտեմ, դու գնա, տաւարն արածացրու:

* *

Երկու մշեցի պատահեցին միմեանց և սկսուեցաւ հետեւեալ խոսակցութիւնը:

— Տօ, ուրգից ես:

— Զըր էրգիէն:

— Ի՛, ի՞նչ խարար. մըր տուն գացի՞ր, ի՞մալ են:

— Փառք Աստծու, սաղ-սալամաթ են: Բաս չըն ըսեր՝ ի՞նչ էղեր է:

— Տօ, ի՞նչ էղեր է:

— Տօ, քու խեր խիւրնդեր է:

— Ի՛յ:

— Բարկրտիր է:

— Ի՛յ:

— Վուազաւ ու փէտյաւ:

— Ի՛, փառք Աստծու. շնորհագալ եմ:

* *

Քահանան մի հարուստ մարդու խոստովանելուց յետոյ ասաց.

— Ներողութիւն, Գաբրիէլ աղա, ձեր շայել չ'կարողացայ խոստովանել:

* *

Գիւղացին բեռք շալակած՝ տընք-տընքալով բարձրանում էր սարը և ասում:

— Աստուած, եա ես բեռք թեթեացրու, եա հոգիս առ, աղատուիմ: — Այդ միջոցին, մի Թուրք, — որի հշը ճանապարհին սատակել էր, — նորա համեաը (փալանը) տալիս է գիւղացուն և ստիպում է, որ հետը տանի: Կամայ-ակամայ, գիւղացին համետն էլ շալակում է և ասում:

— Աստուած, եա ես չ'կարացի քեզ խօսք հասկացնեմ, եա դու չհասկացար:

* *

Հացկերոյթի ժամանակ վարդապետը շուտով վերջացնում էր իւր ճաշը և սկսում էր «Հայր-մեր»-ը: Խակ նորա փոքրաւորը մնում էր քաղցած: Մէկ անգամ, երբ նոքա միասին ման էին գալիս դաշտումը, փոքրաւորը մէկ լծան սամի գտաւ և նորանով մի լաւ ծեծեց վարդապետին:

Երբ, մէկ օր էլ հացի վերայ, վարդապետն ինքը կերաւ, կշտացաւ և սկսեց աղօճքը, փոքրաւորը, որ դեռ ծանր նստած էր իւր տեղը՝ ընդմիշելով աղօթքը, ասաց.

— Հայլ-սուրբ, առ' ի...: մի մասնաւում
— Հա, որզի, ծամի, ծամի, — ասում է վարդա-
պետը և սպասում: մասնաւում մասնաւում:

* * յամականական լարացու

Որդիքը, ձանձրանալով իւրեանց ծեր հօր ա-
րարմունքից, ասել էին նորան, որ ամենեին չխառ-
նուեր իւրեանց գործում և իւր համար հանգիստ
կենար: Մի գիշեր, երբ ծերունին նկատեց, որ էշը
դեռ տուն չէր գնացել, անկողնում պառկած սկսեց
իշխ պէս զռալ: Որդիքն սկսեցին հարցնել միմեանց.
— Եշն ուր ա, էշը, տուն չի էկել:

* * յամականական լարացու

Քաղաքացին, փողոցում աեմելով մի գիւղացի,
որ անգործ կանգնած էր, ասաց.

— Բնարեկամ, արի, էս մէջօկով բուտիկէքը մեր
տուն տար. ես քեզ էնպէս լաւ-լաւ բաներ կ'սորվեց-
նեմ, որ էլ խեղճ չես ապրի:

Դատ լաւ,-ասում է, գիւղացին և, շալակելով
պարկը, գնում է քաղաքացու կողքին: Ճանապար-
հին քաղաքացին ասում է:

— Բնարեկամ, եթէ կ'ասեն, թէ գարի-հացը գառ-
թից լաւն է, ամենեին չ'հաւատաս. եթէ կ'ասեն,
թանէ ապասը խորովածից լաւ է, ամենեին, չ'հա-
ւատաս. եթէ կ'ասեն՝ մքլած պանիրը արդար եղից
լաւ է, ամենեին չ'հաւատաս:

Այսպէս գնալով, գիւղացին արդէն բաց արեց

քաղաքացու տան դուռը և, բարձրանալով սանդուղի
աստիճանները, յանկարծ վերին ծայրից ցած թողեց
գետնին պարկը և ասաց քաղաքացուն:

— Աղա, թէ որ ասեն՝ մէկը սաղ մնաց, ամենեին
չհաւատաս:

* * յամականական լարացու

Օ Պառաւը հաւերը համարելիս ասում էր.

— Չուխտ, ջուխտ, ջուխտ, ջուխտ, ջուխտ: Թա-
մամ է հաւերս: Մէկը, այդ նկատելով, գողացաւ մի
ջուխտը: Պառաւը երեկոյին համարելով, ասում էր.

— Չուխտ, ջուխտ, ջուխտ, ջուխտ: Հաւերս թա-
մամ է: Միւս անգամ գողացան երեք հատը: — Պա-
ռաւը համարեց.

— Չուխտ, ջուխտ, մէ թաք: Վայ, հաւերիս մէկը
կորել է:

* * յամականական լարացու

Երկու բարեկամ այսպիսի պայման դրեցին, որ
եթէ մէկը մեռնի, միւալ նորա համար 30 մանէթա-
նոց գագաղ առնի. իսկ եթէ երկրորդը մեռնի, առա-
ջենը նորա համար 50 մանէթանոց գագաղ առնի: Սո-
րանից յետոյ նոքա հեռացան միմեանցից և գնացին
այլ և այլ քաղաք: Անցաւ երկար ժամանակ և ա-
ռաջենը երկրորդից ստացաւ հետեւեալ նամակը. «Սի-
րել եղայր, ես էլ չեմ մեռնում Արեհն, ինդրեմ,
դագաղի փոխանակ ուղարկիր ինձ 50 մանէթը:»

* * յամականական լարացու

Օ Բահանան, չգիտենալով օրիորդ» բառի նշանակութիւնը, մի փոքրիկ աշակերտուհու ձանապարհին կանգնեցրեց և հաղցրեց. Ալղջի՛, դու օրիորդ ես»

* *

Օ Երկու մարդ, միասին ձանապարհորդելով, տեսան մի կանաչ մարգագետին։ Նոցանից մէկն ասաց.

—Ա ։ Խանի՛ քսան հազար ոչխար ունենայի, անէի էս կանանչ խոտի մէջ, ուտեին, կշտանային ու շաղանայի՞ն, ...:

—Երանի՛, ես էլ տաս-քսան գայլ ունենայի, մըտեին քու ոչխարներիդ մէջ ու ուտեի՞ն ոչխարներդ..., ասաց միւսը։

—Ա ։ Նիրաւ, —բարկացաւ առաջինը, —քու գայլըն իմ ոչխարներն ուտեի՞ն։

—Ա ։ Նասառուած, —աղաղակեց միւսը, —բաս իմ գայլերը քաղցած սատկեի՞ն։

Սոքա, միմեանց հակառակելով, բանն այն տեղը հասցրին, որ ձեռք բարձրացրին միմեանց վերայ, իրար շորերը պատառուեցին և արնոտուեցան։

Դոցա հանգեպ գնումէր մի գիւղացի, որ ձիու վերայ տերերով գինի բարձած՝ քաղաք էր տանում ծախելու։ Սա հարցրեց նոցա կուոի պատճառը և վերջը՝ քանակը խփելով ու պատռելով իւր գինու տիկը, ասաց։

Ո ։ բաս. իմ արունը ըսէնց թափուի, թէ ձեր գլխումը խելք ըլի, հըլ...:

* *

Օ

Առաւոտ էր։

—Բարի լուս, Գալուստ աբեր, —ասաց մէկը նուն-Գալուստին, —քէփդ, հալդ ո՞նց ա։

—Իէ. դու իմ հէքիմն են, —պատասխանեց Գալուստը։

* *

Օ Վարժապետը, որ միշտ աշխատում էր գրաբար խօսել, —մի մսավաճառի հարցնում է։

—Արդեօք ձեզ մօտ ելիկամունք կայ։

* *

Տիրացուն ճաշոց էր կարդում։ Տարաբաղտաբար նորա մի մասը ձեռագիր էր։ Հասնելով ձեռագրին, որից նա ոչինչ չէր հասկանում, շատ և, և անելուց յետոյ՝ ձայն տուեց վերջապէս։

—Ալէլուիա, ալէլուիա։ Դովենա նրուսաղէմ զտէր և օրհնեա զլատուած քո՛ Սիօն։

* *

Մի սնապարծ կին, իրան գովելով, միշտ ասում էր։

—Աղապ վօխսս, հօրս տունը, շատ շնչքով, շնորհքով աղջիկ էի. ամեն հունարը ձեռքէս գուքար. էլ կար, կտուր, նըշխ, նիկեար....:

—Բա քու որդի Բարսեղն ասում է, թէ ամայրս սուտ է ասում. հօր տունն էլ էնպէս անշնորհք էր, ...—ասաց լսողներից մէկը։

— ԱՌ. գրողը տանի Բարսեղին, —ասաց մնապարծը, —էն վօխար, անձաղ գեղի տները կը մանկէր, տունը կ'կենար, որ տեսնէր: *

Սեղանի և աթոռի մասին խօսելուց յետոյ ուսուցիչը հարցրեց աշակերտներին.

— Արեք, լուսինը. ի՞նչեց են շինուած: — Առութիւն: Վերջապէս մէկը վեր կացաւ և ձայն տուեց. «Քայտից, վարժապետ»:

* *

Ծուրբը, տեսնելով, որ իւրեանց սուրբերին ուխտ անելով, իւր նորածին որդիքը կենդանի չեն մնում, —ուխտ արեց, որ եթէ կրկին որդի ծնուի, նորան Հայ մկրտել տայ: Անցաւ ժամանակ և որդին ձնուեց: Մի քանի օրից յետոյ Թուրբը բեռնաւորեց իւր ուղար բրդով ու բամզակով և գնում էր զէպի Թաւրիս, որ մի քահանայ գտնէր: Ճանապարհին, մի զետակի ափումը տեսնում է մի մօրուքաւոր Հայ մարդ և հարցնում է.

— Քահանայ ես գու:

— Այս, ասում է Հայն:

— Խնդրեմ, առ այս բուրփն ու բամզակը և իմ երեխան մկրտիր:

— Բներ, —ասում է Հայն, —և երեխան ջուրը ձգելով, կրկնում է երեք անփամ.

„Գետը գալիս ա Սաւալանայ,
„Թուրքի լամուկը լողանայ,
„Ինձ ինչ կ'հայանայ, թէ կ'թուրքանայ,
„Թաք իմ բուրդն ու բամզակը բօլանայ»:

* *

Տան-տէրը, իմանալով, որ տանիքի վերայ գողէ մանգալիս, իւր կնոջն ասաց.

— Այ կնիկ. Զահիլ ժամանակ, երբ որ գողութեան էի գնում, փաթաթվում էր տան մէջ ընկած լուսնի շողբին և իջնում էր տան մէջ: — Այս ասելուց յետոյ նա պառկեց անկողնում: Գողը, հաւատաւով տան տիրոջ խօսքերին և նորան քնած կարծելով, կամենում էր փաթաթվուել լուսնի շողբին. բայց յանկարծ վայր ընկաւ տան մէջ, կոտրելով իւր ձեռն ու ոտը:

— Այ կնիկ. — ձայն տուեց տան տէրը, — վերկաց, կրակ արա, տունը գող է մուել:

— Աչ կրակ արա, ոչ չարչարուիր, — ասաց գողը տնքալով, — առաւօտը վերկաց, ինչ ուզումես, արա. Էն խրատը, որ գու ինձ տուիր, .. ես էս օր էլ ես էստեղ, էգուց էլ:

* *

Մէկը չգիտէր ճեռի շապաց բառերի նշանակութիւնը: Հարցրեցին նորան.

— Հօրդ անունն ի՞նչ է:

— Հեռի լողաց, Աւագ, — պատասխանեց նա:

— Ուրտեղից ես գալիս:

— Հեռի լսողաց, ժամէն:

* *

ԳԻՒՂԱՑԻՆ: Ի՞նչ տամ էս դանակին:

ՄԱՆՐԱՎԱՃՈՂ: 40 հօպէկ:

ԳԻՒՂԱՑԻՆ: ԶԵ. 40 հօպէկ չ'արժէ: Քեզի կ'տամ
մէկ ապասի, 3 շահի ու 16 գուշ.
գուզես, տուր. գուզես, մի՛ տա:

* *

ՊԱՐՏԱՊԱՆԼ: Աղա, Մարկոսը ըստուր բարեկամն է.
Էդ հէս: Ուրիշ վկայ ունիք, բերէք,
փողերը տամ:

ԴԱՏԱՒՈՐԸ: Ի՞նչ բարեկամն է:

ՊԱՐՏԱՊԱՆԼ: Եղ մարդու խնամոնց թազա առած
եզոնց գեղէն է:

* *

Ծաղրածու մարդուն հարցրին.

— Ի՞նչի՞ ես կաղում:

— Ճանճը ոտս կոխեց, — պատասխանեց նա:

* *

Գիւղացիք, խմանալով, որ մէկն իւրեանց դէ-
զերն այրում է, դիմեցին իւրեանցից մէկին.

— Աղքէր, մըս դէզեր միշտ կ'էներ. չըս կանայ,
մուղայիթ էղնիս, որ զիան մը չ'էնեն Քրդեր:

— Բա չ'ըմ կրնայ: Իդա գուք տուեք ինձ եալ-
սուն զուրուշ, ձրք դէզեր պախեմ:

Գիւղացիք՝ խոստացան տալ նորան իւր պա-
հանջած վարձը: — Մէկ օր այդ պահապանի կինն
ասում է մարդուն.

— Տօ, ա մարդ, հօրի ըս էրթայ, դէզերին մու-
ղայիթ էղնիս. չէ քըզի փարա կուտան:

— Տօ, ի՞նչ կըսես, — պատասխանեց ամուսինը, —
դէզ կրակ էնողն ես եմ. ես լէ չէրեմ, ուրիշ
վով կ'էրէ:

* *

Թեմական տեսուչը կամենումէր ուսումնարան
հիմնել մի գիւղում:

— Վ արժապետ, — ասում էին գիւղացիք, — մունք
հի՞նչ ընկ անում սումավարը. մունք գիւղացի մարդ
ընք, մերն էն ա, որ մեր խօսէքը վէսկի վարեն, հայ
աշխատեն, օտեն:

— Ես ուզում եմ, որ ուսումնարան ունենաք, —
պատասխանեց տեսուչը, — որ ձեր որդիքն էլ ձեզ-
պէս սուհանը չ'ասեն ուսումնարանին:

* *

Պահանան, խոստովանելով անկողնում պահ-
կած հիւանդ պառաւեին, ասում էր.

— Մայրիկ, ասա. մեղայ Աստուծոյ:

— Ա իս, տէր-տէր ջան, — ասաց հիւանդը տըն-
քալով, — ես ձար ունիմ, ես իլած ունիմ, օր դու-
քալով, — ես ձար ունիմ, ես իլած ունիմ, օր դու-
քալով, թէ լսա. Ֆշայ Աստուծոյ: Զես տես-
նում, բերանս չի բացվում, թէ խօսիմ. ես ի՞նչը

ըսեմ. Տեղայ Աստուծոյ: Տէր-տէր ջան, Շիմի թողութիւն տուրք. Երբ որ բարով-խելով սաղցայ, մէկի տեղ՝ տասն անգամ ըսեմ. Տեղայ Աստուծոյ:

* * *

O Երթունքը ճզուած մարդուն, մի գիշեր, կինն ասաց.

— Ա. Մարդ, փչե, կրակը հանդցրու:

— Իս ի՞նչ անխղճմանք կնիկ է, — ասաց ամուսինը, — ի՞նչ դժար բան կայ, ինձ է անել տալիս:

* *

Աստիկ կարկուտը փշացրեց արտերը և վերջը երեւցաւ ծիածանը: Գիւղցին նայեց գէպի երեխնք և ասաց ծիծաղելով.

— Հը, հը, հը. լաւ բանը լէ երեց, չ'ամշւնայ լէ, գիւաղ գօտի լէ կը կապէ:

* *

Մէկ անգամ նուն-Գալուստն ասաց երեք երիտասարդի:

— Իուք բարձրացէք էս չինարի ծառի վըայ. գեռ ես երեք անգամ ոտով խփած չեմ ըլի, գուք երեքդ էլ վէր կ'թափիք ծառից:

Երիտասարդները բարձրացան ծառը: Գալուստը մէկ անգամ ոտով պինդ խփեց ծառին և հեռացաւ, նստեց: Նրկար տպասելուց յետոյ երիտասարդները ձայն տուին.

— Ի՞է, խփի է է:

— Իմ քէֆը չի՞: — ասաց Գալուստը, — մէկ էլ եկող տարի կ'խփեմ:

* * *

— Պարոն Գէորգ, — ասում էր մէկը միւսին, — դու էնպէս ժամ ես ասում, որ մարդու զահլէն գնումաւ: Արա, փորձի համար, քեզ դասումը թող ու ինքդ գնա ժողովրդի միջնց ականջ դի քու ժամ ասելուն:

* *

Գիւղցին մի ջվալ ցորեն պէտք է տանէր ջրաղացը: Նո իշխ մի կողքից կախ արեց ցորենով ջվալը. իսկ միւս կողքից կախ արեց մի դատարկ ջվալ և մէջն այնքան քար լցրեց, մինչեւ որ երկու կողմից հաւասարակշռութիւն պահպանուեց. և էշը քշեց գէպի ջրաղացը:

— Եղ ի՞նչ ես տանում, աղըէր, ձայն տուեց մէկ անցաւոր:

— Մի ջվալումը, ցորեն, մէկէլումը՝ քարեր, — պատասխանեց գիւղցին:

— Ա. յ, անշնորհք մարդ, ըտէնց չեն անի, — ասաց անցաւորը. քարերը դատարկեց, ցորենի կէսը լցրեց դատարկ ջվալում և ասաց. ոգէ հմի գնա: Գիւղցին զարմանալով նօրա ների վերայ, հարցրեց:

— Դու հարուստ ես:



— Զէ. Ես ըսկի փող չ'ունեմ, —պատասխանեց անցաւորը:

— ԷՇ. բաս դուն էլ յիմար ես, —ասաց գիւղացին և կրկին երկրորդ ջվալումը քարեր լցնելով, շարունակեց ձանապարհը:

* *

Աւագ-ուրբաթ օրն էր:

— Ի՞նչ լաւ գողութիւն անելու վախտ ա էսօր, է՛տ:

— Ինչի՞:

— Մեր ամենիս դատաւորը գերեզմանումնա. դատաստան անող չ'կայ:

* *

— Ի՞ն ի՞նչ է, որի անունը կայ, ինքը չ'կայ, —հարցրեց Դաւիթ-խանը Արբաս-Միրզային:

Արբասը հրամայեց ներկայ եղողներին, որ լուծեն այդ հանելուկը: Մէկին ասաց. «Հրեշտակն էք, միւսը, թէ ասատանան»: Տեսնելով, որ ոչ ոք չի կարողանում լուծել, հարցրեցին Դաւիթ-խանին:

— Ի՞ն իմ ռռմիկն է, —պատասխանեց Դաւիթը:

* *

«Սուրէն» անունով մի մոռացկոտ մարդ իւր դռան վերայ գրեց.

— Ով երկու անգամ խփի դռանը, և բաց չ'անեն, թող գիտենայ, որ Սուրէնը տանը չ'է:

Մէկ օր, սա փողոցից վերադառնալով, խփում է դռանը երկու անգամ, բայց դուռը չեն բաց անում: Յետոյ, կարդալով գրուածը՝ հեռանում է, խօսելով իւր մէջ:

— Սուրէնը տանը չ'է:

* *

Վարդասպետը քարոզելիս շատ սուտ էր խօսում, որ ժողովուրդը զարմանայ: Բայց յետոյ, տեսնելով, որ իւր խօսքերին այլ ևս չեն հաւատում, իւր փոքրաւորին պատուիրում է.

— Երբ կ'տեսնես, օր քարոզես մէջ անհաւատալի բան կասեմ, փիլոնիս ծայրէն քաշէ:

Մէկ անգամ, քարոզի մէջ, խօսք ընկաւ օձերի և վիշապների վերայ, և ասաց.

— Ես իմ ռչքովս տեսայ մէկ օր անապատին մէջ այնպէս ահազին, այնպէս հրաշալի, այնքան անճոռնի օձ մի, որոյ երկայնութիւնը, որքան կարծէք. 160 կանգուն ասեմնէ՝ հաւատացէք, օր սուտ չ'է:

Փոքրաւորը փիլոնը քարշեց և ասաց.

— Պիտի ասէք, թէ Ճէ Շէ էնէ ո՞ւ է, 160 կանգուն օձ մի կ'լինի:

— 160 չ'է, նա՝ 100 կանգուն թող լինի, քիչ է մի, օրհնեալ ժողովուրդ, —ասաց վարդապետը:

Փոքրաւորը կրկին քարշեց փիլոնը:

— Լի՛. 100 թող չ'լինի, դէ՞ն 60 կանգուն թող լինի, խօսք ունիք մի, —շարունակեց քարոզելու:

Փոքրաւորը դարձեալ քարշեց փիլոնը:

— Պէ՛ ճռնը՝, 25 կանգուն թող լինի. 25 կանգուն
երկայնութեամբ օձ մի:

Երբ փոքրաւորը չորրորդ անգամ քարշեց վիշտնը, վարդապետը այլ ևս չ'համբերելով, դարձաւ
գէպի փոքրաւորը և բարձր ձայնով՝

— Յօ, վուժ կենդանի, — ասաց նորան, — կըսես,
քի մէկ խարլու (թիղ) էր այն անիծածին երկայնութիւնը:

* * *

Մի խմբի մէջ, մէկ անգամ; Խէր-Սէօլլամազը
պատասխաններ էր տալիս օտարականների հարցերին.
բայց ոչոքի լաւ համբաւ չէր հաղորդում իւր տնից
կոմազդականներից: Նոյանից մէկը մնածեց այնպիսի
որ բան հարցնի, որ եթէ վատ պատասխան տայ,
գո՞նէ չ'տրամի:

— Խէր-Սէօլլամազ աղբար, — հարցրեց նա, — մեր
դոնէն օր անցար, Կօլլօ շունը տեսար:

— Ատկեցաւ, դու ողջ ըլլիս, — պատասխանեց
Խէր-Սէօլլամազը:

— Եազըն, ի՞նչի:

— Զեր զբո ձիուն միար կերաւ, անտի սատկեցաւ:

— Արկը ձին ալ սատկեցաւ:

— Հա. հօրդ գերեզմանին քարը վրան բարձաւ,
մէջքը կոտրեցաւ:

— Արկը հարս ալ մեռաւ:

— Հա. մօրդ սըղըթիէն 3 օր չ'անցաւ:

— Ո՞ս, մըկըս մարս ալ մեռաւ:

— Հա, Աղաջան, տղոցը սըղըթիէն 3 օր ահճախ
առղ մնաց:

— Ո՞ս, չ'ըսեն տունս քարուքանդ էղաւ:

— Շիտակն ըսեմ, քարուքանդ ըլլելը չ'տեսայ,
հըմը հս-օր անցայ, տան տեղը պօստան ցանէին կը:

* *

Գիւղացին ճաշի էր հրաւիրուած իւր քաղաքացիի կնքահօր տանը: Որովհեաւ հացը շուաշուտ
պակասում էր, ուստի տան-տէրն ասում էր, «Ձուած».
և իսկոյն հաց էին բերում սեղանի վերայ: Մի քանի
օրից յետոյ քաղաքացին հիւր ընկաւ իւր գիւղացի
սանահօր տանը: Գիւղացին սեղանի վերայ շատ հաց
բերել տուեց և սկսեց կտրատել:

— Անահէր, ի՞նչ ևս անում, — զարմանալով
հարցրեց կնքահայրը, — ի՞նչի՞ն էրքան հաց կտրա
տում:

— Քաւոր, — պատասխանեց գիւղացին, — թևերը
կտրատում եմ, որ ձեր հացերի պէս չ'թռչեն:

* *

— Ի՞նչ ևս էկակէս տխուր նստել ի՞նչ դարդ
ունես:

— Ե՛հ, էլ ասում են, էս տարի 1000 մանէթի
վնաս ունեմ, ...

— ԷՇ. դուն էլ. հենց գիղէի, առանց դանակ
բռտտան ես զնացել...:

* *

Օ Ստախօսը լսելով, որ իւրեանից աւելի մեծ
ստախօս կայ, գնաց նորա տունը փորձելու: Դուռը
բաղլսեց և ծառան դուրս եկաւ:

— Աղջիք տանն է,—հարցրեց եկողը:

— Ո՞ւ—պատախանեց ծառան, — էս օր էնպէս
սաստիկ անձրեւ էկաւ, որ ամպերը պատռառուեցին.
աղէս գնաց կարկատելու:

— Եթէ ծառան այսպէս է, — ասաց ստախօսը, հետ
ռանալով—տէրն ի՞նչ կ'լինի:

* *

Հիւրը, մի քանի ամիս մնալով բարեկամի տանը,
ձանձրացրել էր նորանց: Դորան մի ճար անելու հա-
մար մարդ ու կին մտածեցին կոռել միմեանց հետ:
Սկսուեցաւ կոհել և մի քանի րոպէից յետոյ շատ
սաստկացաւ: Հիւրը կամեցաւ խաղաղութիւն դցել
իսկ աան-տէրն ասաց նորան.

— Քու էգուցուայ ճամփէն գիղենայ, որ պէտք է
գնաս, ես սրան կենդանի չեմ թողնիլ:

— Զեր էն մենձ ջվալի հացը վկայ, որ պէտք է
միասին ուտենք, չեմ թողնի, որ դու իմ խնամուն
ծեծես, — պատախանեց հիւրը:

* *

ԾԱՆՈԹԸ: Տէ-հայր, ինչպէս ես:
ՔԱՀԱՆԱՆ: ԷՇ, ինչպէս ընեմ, որդի. կնունք
չկայ, պասկ չկայ, մեռելն էլ Աս-
տուած դայ:

* *

Օ Մայրը միշտ յանդիմանում էր որդուն շատ
հարբելու համար: Մէկ օր որդին հարբած տուն
մտաւ և ասաց.

— Մայրիկ, աչքդ լուս, արազը թարկ եմ արել,
ում եմ խմում:

* *

Եպիսկոպոսը, գողութեան վերայ քարոզելով Օ
հաստատումէր, որ հանդերձեալ աշխարհում գողերն
առանց պատժի չեն մնալ: Գողերից մէկը, որ ներ-
կայ էր քարոզեն, շնչեց իւր ընկերոջ ականջում:

— Գոգոր, գիղեն, էդ քարոզը էն գէչ (այն կող-
մի) գողերի հմար է. մեզի գեօրա հէշ բան չ'կայ:

* *

Մէ քանի որտրդներ ճաշի էին հրաւիրուած Օ
մի հարսաի տանը: Նուտովի խօսք բացուեցաւ որսոր-
դութեան վերայ և տան-տէրը հպարտութեամբ ա-
սայ.

— Մէկ օր ես մի եղնիկի նշան դրեցի և այնպէս
խփեցի, որ գնտակն ականջը մտաւ և յետին ոտից
դուրս եկաւ:

Հիւրերն սկսեցին ծիծաղել: Իսկ տանտէրն ասաց.

— Եթէ չէք հաւատում, ծառայիս հարցրէք: Այտղայ, Սիմօն, այդպէս էլաւ, թէ չէ:

— Հրամերես, աղա, —պատասխանեց ծառան. և դառնալով գէպի հիւրերը, աւելացրեց, —բայց գիտէք. երբ աղէս թվանքն արձակեց, եղնիկը յետին սոսով ականջը քորում էր:

Յետոյ ցած ձայնով ասաց տիրոջը.

— Աղա, ել էդպէս մեծ-մեծ ստեր չ'ըրդես, որ անջախ կարացի ծէրը ծէրին հասցնել:

* *

Մի ծերունի, որ իւր կեանքումը ոչ մէկ անգամ եկեղեցի չէր մտած, —մէկ որ ընկնում է իւր որդու ետևից, որ սորան բռնի ու պատժի: Որդին ներս է վաղում եկեղեցին. իսկ հայրը, կանգնելով եկեղեցու զռների մօտ, ասում է.

— Այ, որդի. արի, քարը գոգեդ թափէ, զուսարի էդ քամպրխից (աւերակ). սապապ մի՛ էլնի էս ծերութեանս ժամանակ, ու մացնէ ընձի եկեղեցին:

* *

Հրաւէրքում մէկ եփած հաւ զրին տիրացուի առաջեւ, որ կտրատէր: Քահանան, որ նորա կողքին նստած էր, ասաց.

— Տիրացու Աարգիս. իմ փայն շատ արա, քունն էլ իմի չափ արա. ուրիշներինը դաղըթմիշ արա:

* *

Դիւղացին, երկար ժամանակ սպասելով իւր 25 կօպէկին, որ պարտական էին նորան մերձակայ զիւղում, —մէկ մանէթով ձի վարձեց և զնաց 25 կօպէկին ստանալու:

* *

Ճանապարհին հայրը հարցնում է որդուն.

— Վարդան ջան, դուռը լաւ կողպեցի՞ր:

— Լաւ կողպէք չ'գտոյ, —ասաց որդին, —բայց տան մէջ եղած բոլոր բաներին ջոկ-ջոկ նշան եմ դրել. եթէ մէկը տեղեցը շարժեն, ես կ'իմանամ:

* *

ՍկեսրաՅրը: Դու ինձ լաւ ճանաչի, համար արձիծ եմ:

ԿՈՐ-ՀՈՐՍԸԼ: Դու համբերիր, ոսա առւն դնեմ: էտ արձիծը կ'հալեմ ու քեզ կը խմացնեմ:

* *

Քահանան խոստովանում էր մէկին.

— Հարթեցող են, —հարցնում է քահանան:

— Զէ. տէր-տէր:

— Գող են:

— Զէ. տէր-տէր:

— Բամբասող ես:

— Զէ. տէր-տէր:

— Բաս դու ի՞նչ ես:

— Ես հաց-թխող եմ:

* *

Գիւղացին, որ մի մանէթ յետ էր ձգել մի
զյդ տրեխ առնելու համար, գնաց քաղաք և, մըտ-
նելով տրխարարի խանութը, հարցրեց.

— Իս տրեխներին ի՞նչ տամ:

— Զորս աբասի:

— Զէտ. մի մանէթ կ'տամ, —պատասխանեց գիւ-
ղացին:

* *

Մայրը, որի որդին զիշեր-ցերեկ դուրսն էր
մնում, մէկ օր տեսաւ նորան և ասաց.

— Ո՛րդի. ախըր ե՞փ պտես տուն գայ...:

— Ելի ընդեղ էք կենում, դէզի, —հարցրեց որդին:

* *

— Մեր հաւը կորեր է, չէք տեսեր, —հարցնում
էր մի կին իւր դրացուհուն:

— Ովոր քու հաւդ տեսած էղնի, —պատասխա-
նեց նա, —մորթէ, փետէ, էփէ, էրթայ բազման,
չըխկ-չըխկ էնէ փապճին նալշան. նստէ, ուտէ, ամ-
նիքը վըլայ. հը, աւտըցիր:

— Աման էյ, էյ. —ձայն առեց կորցնողը, —մի
էրդնուլ աւտըցի, աւտըցի:

* *

Վարաբաղե մի գիւղում, Գուքի անունով վար-
ժապետի մօտ մի հասակաւոր աշակերտ սովորում
էր. «ա. բ. գ. դ.» տառերը: Զ'կարողանալով սովորել
«զիմ» տառը՝ նա մէկ անգամ ասում էր իւր ընկե-
րոջը.

— Ակու, եարաբ որ էս (դ) Ճնջեմ, տէրը (Գուքի)
կը գիտայ:

* *

Ճահ-Աբբասը մտնելով Ագուլիս, հասարակու-
թիւնը հանդիսաւոր կերպով եկաւ նորա առաջը:
Բազմութեան մէջ, շահի աչքն ընկաւ մի շատ գե-
ղեցիկ կնոջ վերայ. և յայտնեց նորա ամուսնին, որ
եթէ իւր կինը կ'տար, ոչինչ վնաս չէր տայ քաղա-
քին: Ամուսինը, իւր կինը զահելով քաղաքի փրկու-
թեան համար, տուեց շահին: Անցաւ մի քանի տա-
րի: Մէկ անգամ, այն կնոջ ամուսինը, որ Ագուլիսի
երեկի հարստներիցն էր, հագաւ հասարակ շորեր
և գնաց շահի մօտ, Սպահան: Պալատի առաջե-
որմնադիրները մի պատ էին շնուռմ: Սա էլ խընդ-
րեց նորանց, որ իւրեան էլ թոյլ տան բանելու: Նո-
րան թոյլ տուին և նա ձեռք տուեց գործին: Իսկ
այդ միջոցին շահը և իւր նոր կինը սատրինջ (նար-
դի) էին խաղում պատշգամում:

Նոր վարպետը, շինելով պատը և նկատելով
իւր կնոջը, ձայն տուեց մշակին.

— Քեօչնա գարդմ թաղալանդի. օլան, գեաթք
գեած:

Աինը, ճանաչելով ամուսնին, ձայն տուեց.

— Գէշան զիւնա զիւն եթմասն, եա գեալասան
շաշու փեանջ:

* *

Կովատէրը, գանգատառելով, ասում էր.

— Արածաղիկ ոչխարատէրը,

«Ուրախ ըլի փողատէրը,

«Քօվլու ըլի ձիատէրը,

«Թաքուն ապրի ճանձատէրը,

«Ածիշուճի էշատէրը,

«Փողլու ըլի խողատէրը,

«Եղլըղալի ըլի գոմշատէրը,

«Ջափա քաշի էժատէրը»:

* *

Կախաղանի վերայ:

ՄԱՐԴԱՍՊԱՆԻ: Բողազ մի կապի, մէջքս կապի:

ԴԱՀԻՃԻ: ինչի:

ՄԱՐԴԱՍՊԱՆԻ: Բողազ քոր է զալիս:

* *

Հ 0 Քահանան քարողելիս ասաց.

— Աիրելի ժողովուրդ, ձեր ժամ գալն էս եկեղեց
յուն էնալէս է սազ գալիս, ինչպէս սիսորը՝ տաւարի
մսին:

* *

Հայրը և որդին ճանապարհորդելիս մօտեցան
մի խոր գետի, որից անվասս անցնելը շատ գժուար էր:

— Հայրիկ, —ասաց որդին, —արի այս գետից
չանցնենք, կ'իւրզուինք:

— Գնա, որդի, մի վախենալ, —պատասխանեց
հայրը, —թէ խեղդի, յետ դառնալիս վերի ճանա-
պարհովը կ'գնանք:

* *

Աինը 25 կոպէկ տալով իւր ամուսնուն, քա-
ղաք գնալիս պատուիրում էր նորան:

— Այ մարդ, էրկու կազ լաւ կտաւ առ, մէկ
շապիկ քղի, մէկ լէ ընձիկ. մէկ խաճրկաթ, մէկ ա-
կիշ, մէկ թաթակիշ շէրեփ, ջուխամլէ սօլ. թէ կա-
նաս, խինդ շահի էլ աւելցնես, բերես, տանք տէր-
արբո՞ջ:

* *

Ա անքի գաւթումը նաղարա—զուռնա էին ա-
ծում: Վանահայրը փոքրաւորին ուղարկում է, որ
ձայնը կտրել տայ: Բայց պարեկողները փոքրաւորին
մէջ են առնում և միասին պարում են: Երկար սպա-
սելուց յետոյ վարդապետն ինքն է զնում և բարկա-
նալով, ասում է «Նրգ...» (անզովածներու խօսքը բե-
րանումն է մնում): Բայց խկոյն նորա ձեռքից էլ
բռնում են և խառնում են իւրեանց հետ: Խոկ վար-
դապետը, պարզալով, զուռնայի եղանակով սկսում է
ասել. նրգ, նրգ, նրգ. նրգ-նրգ-նրգ:

* *

ՖԱԽՈՂԸ: Ես ջորին մի սովորութիւն ունի. հէնցոր
վրէն նստեն, վեց անգամ տրամինկ կ'անի։
ԱՌՆՈՂԸ: Մէկն էլ բաւական է. առ փողը։

* * *

Մէկը իւր բարեկամին փող էր փոխ տուել. և
ժամանակն անցնելուց յետոյ պահանջեց իւր փողը։
Պարտապանն ուրացաւ, թէ փող չի տաել նորանից։
Ուստի երկուսն էլ գնացին նրուսաղէմ՝ երդուելու։

Պարտապանը ձեռքը դրեց Քրիստոսի գերեզ-
մանի վերայ. բայց ոչինչ ֆեաս չպատահեց։ Պարտա-
տէրը նորան տարաւ Սուրբ-Յակօբի գերեզմանը։
Պարտապանը ձեռքը դրեց գերեզմանի վերայ և իս-
կոյն գօսացաւ ու չկարողացաւ յետ քաշել։ Փողի
տէրն ուրախանալով, ձայն տուեց։

—Եթէ Ս. Յակօբը չ'լինէր, Քրիստոս առնա
կ'քանդէր։

* * *

Զիօսկան Հարսին իւր սկեսրայրի ներկայու-
թեամբ մէկը հարցրեց նորա շորի համար. «Էս կտորը
ո՞նց ևս տուելո՞։ Հարսը փոխանակ իւր եղքօր ական-
ջումն առելու, մատեցաւ սկեսրայրին և կամաց ական-
ջումն ասաց. «Ասա, արշենը վեց արասով ենք տուել։

* * *

Ճանապարհի պատրաստութիւն տեսնելով, մէկն
ասաց Խէր-Սէօյլամազին։

— Ինձ համար աղօթք արա. Երբ էլք բարով
տուն կ'գամ, քեզ մի բան կ'ընծայեմ։
— Ելաւ, որ գնացիր ու յետ չ'եկար, ո՞վ կ'տայ, —
Հարցրեց Խէր-Սէօյլամազը։

* * *

Զորամիջով անցնելիս զիւղացիք կամեցան մի
մեծ ծառ կտրել։ Բայց, որովհետեւ սուր չ'ունեին,
նոցանից մէկը բարձրացաւ ծառը, բռնեց ամենավե-
րին ճիւղը և, կախուելով նորա վերայ, միւսներին
ասաց, որ բռնեն իւր ոտներից։ Այդպէս, արդէն
ամենքը կախուել էին միմեանց ոտներից և առաջինը
ձայն տուեց վերեկից։

— Հլա կացէք, ափումս մէկ թքեմ, ... Հազիւ-
թէ նա թռողեց ճիւղը, ամենքը զլորուեցին, ձորն
ընկան։

* * *

Մայլը իւր փոքրիկ աղջկան ասում է։
— Ես քեզ միրգ կ'տամ, հայրիկիդ չ'ասես, թէ
Մարտիրոսը (սիրահարը) էսօր մեր տուն էկաւ։

Ըսթրիքի ժամանակ, հօր ներկայութիւնով
աղջիկն ասում է մօրը.

— Մայրիկ, զէ ինձ միրգ տուր, որ հայրիկիս
չ'ասեմ, թէ Մարտիրոսն էկաւ, էէ։

* * *

ՎԱՐԺԱՎԱՏՅԱԼ: Ալշակ, արտ, պատմի՛ր ձեր տան
մասները:
ՓՈՔՔ ԱՇԱԿԵՐՏՅԱ: Մեր տանը կայ՝ հիւրատուն, խո-
հանոյ, ննջարան, մանկանոց և մէկ
այժանոյ, վարժապետ:

* *

— Եսնի, — ասում էր մի կին դրացի պառաւին,
ինձ տօլմա եփիլ սոլվացրու:—
— Միսը լաւ կ'ծեծես, — ասաց նա:
— Գիգամ:—
— Աղը, փրփիլը, սոխը, զերէն՝ կ'անես:
— Գիգամ:—
— Լաւ կ'ձմռես:
— Գիգամ:—
— Փոթոլումը կ'փաթթես:
— Գիգամ:—
— Ու պղնձումը կ'դարսես:
— Գիգամ:— Պառաւը նեղանալով, որ հարցնողը
միշտ գիշամճ էր ասում, շարունակեց.
— Մի կառը առպատ էլ զայիմ էրեսին կ'գնես:
— Գիգամ:—
— Տաք ջուրը վրէն կ'ածես, կ'գնես կրակի վրայ:
— Գիգամ:—
— Դէ. գնա, բաէնց եփի:
— Շնորհակալ եմ, որդիքդ ապրի, — ասաց հարցը
նողը և գնաց տօլման եփելու:

* *

— Խեղճ մարդն ասում էր.
— Օրս տես, ձարս տես, մզուրս տես. հողն իմ
դլսին, հալամ ասում են՝ գժոխը էլ կայ:

* *

Մի սղնախեցի վաճառական հաննելով Մօսկվա,
մտածում է. ևԱՀԱ. ես եկայ Մօսկվա. բայց ի՞նչ
առնեմ, որ մեր քաղաքումը բոլորը ծախսեմ և չվնա-
սուեմ:— զայ. զիտեմ, ասաց նա փոքր ինչ մտածե-
լուց յետոյ, Սղնախում 1200 տուն կայ, յայտնի
բան է, ամեն տանը մի կողպէք անպատճառ. հար-
կաւոր է:» Եւ մեր վաճառականը, առանց բանը եր-
կարացնելու, զնեց 1200 կողպէք և գնաց Սղնախ:

* *

— Այլ տեսել ես:

— Ալերել էլ չեմ:

— Այլը փայտ է, ոյ մարդ:

— Նաև. էնզուր փետի համ էր տալիս:

* *

Գինի խմելիս մէկի քիթն իսկոյն կարմում
էր և ընկերը նորան միշտ ծաղրում էր: Նա ընկե-
րոջը 10 կոպէկ տուեց, որ այլ ևս չծիծաղլը: Ըն-
կերն առաւ փողը: Երբ մէկ անգամ էլ ճաշի ժամա-
նակ, նա մի քանի բաժակ գինի խմեց և կրկին
քիթը կարմրեց, ընկերը՝ վերադարձնելով նորան
փողը, ասաց.

— Աղքէր. բռնի քու երկու շահին, քնթիդ հալը
հալչէ:

* *

Վ արդապետի փոքրաւորը սաստիկ հայհոյող
էր, ուսոի վարդապետը հրամացեց նորան, որ մի
փոքր քար գնի լեզուի տակը: — Մէկ անձրեային օր
նոքա գիւղն են գնում: Մի պառաւ, իւր դուն
առաջել կանգնած՝ տեսնելով վարդապետին, ասումէ:

— Հայր սուրբ, մի քիչ կանգնի ըտեղ:

Հ այրսուրբը կանգնեց անձրեի տակը, կարծե-
լով թէ իրան տուն պէտք է հրաւիրեն: Երկար սպա-
սելուց յետոյ վարդապետի համբերութիւնը հատ-
նումէ: Վերջապէս դուրս է դալիս պառաւը և ա-
սումէ.

— Իէ գնա ճամբէդ, հայր-սուրբ:

— Բա ինձ ընչե՞ էսքան ժամանակ սպասել տուիր
անձրեի տակը, — ասաց վարդապետը, բարկանալով:

— Հ աւերս թուխս պտի գնէի, — ասաց պառաւը,
քեզ տեսայ ու գնացի, դրի, որ ձագերը պուպու-
շիկ դուրս դան:

— Հ այր-սուրբ, ասաց փոքրաւորը, — լեզուիս տրկի
քարը հանեմ:

— Հ ան, որդի, հան, հերէս ժամանակն է, — ա-
սաց վարդապետը:

* *

Հ իւրը, գինու թասը ձեռքն առնելով, օրհ-
նում էր տանտիրոջը.

— «Օխոր որդու հէր ըլես,
«Դամու լովլաթի տէր ըլես,
«Մարինդ ալաչուխ ըլի,
«Դաշտինդ դարբազ ըլի,
«Կլակինդ պղինձ ըլի,
«Միջինը բրինձ ըլի,
«Ղ օհուշ քեթխուղա ըլի,
«Տակինը խալիչա ըլի»:

* *

ԵՐԻՑԱՍԱՐԴԸ: Պարոն, ես կամենում եմ 5000 մա-
նէթ օգուտ տալ Ձեզ:

ՎԱՃԱՌԱԿԱՆԸ: Խնդրեմ, պատմեցէք, թէ ինչպէս:
ԵՐԻՑԱՍԱՐԴԸ: Ես գիտեմ, որ դուք մէկ աղջիկ ու-

նիք, որին իբրև օժիտ 10000 մա-
նէթ տալու միտք ունիք: Բայց ես
ձեր աղջիկը կ'առնեմ 5000 մանէ-
թով. և գուք այդպիսով կ'աշխատէք
5000 մանէթ:

* *

Վ իձողներից մէկն ասաց միւսին.
— Տօ, դուն ի՞նչ մարդ ես, որ խօսում ես:
— Ե՞ս գեանի տակը կերակուր էփողի աղ գցողն
եմ, — պատասխան տուեց միւսը:

* *

Արաբաղում, Զատիկի օրը, զիւղի ամեն անելում, լու ձաշ են պատրաստում, որին պէտք է մասնակցի տուն-օրհնող քահանան: Մի քահանայ, զիւղի վերին ծայրից սկսելով, օրհնում էր իւր ժողովրդի աները. և ամեն տեղ, սովորութեան համաձայն, ճաշակելով պատրաստած կերակուրները, զիւղի կիսումն արգին բաւական լիացել էր, այնպէս, որ էլ ոյժ չուներ շարունակելու: Տեր-հայրը հարացեց իւր տիրացուին, որ մի սայլ ծել տայ. ընկառ սայլի մջ և, իւր մարմնին հանգստութիւն տալով, տուն էր գնում:

Մի պառաւ, տեսնելով իւր տան առաջեկց անցնող սայլը, ձայն տուեց.

— Ատէր, կարգիդ մեռնիմ, տունս մնաց անօրհն սիլ զազս էլ էփածա, բուղը վեր աըլում,...

— Ագա, — ասաց քահանան, գլուխը բարձրացնելով — ագա, կմշնիրը խի արա. որ պըտառիմ-էլ պահ ուտեմ, ...

* *

— Իու ում մօտ ես աշակերտ, — հարցըին մի պատճու:

— Դուրգարի մօտ, — պատճախանեց նա:

— Քանի՞ տարով:

— 6 տարով:

— Երի համաց ասաց հարցնողը, — մինչեւ դու կ'սովորես, վեց տարուայ մջ էս քաղքումը ինչ շնութեան կայ, բոլորը կ'վերջանայ, էլ դու ի՞նչ պէտք թիւն կայ,

է շնեն, յիմար, պարապ ման կ'գտա:

Հետեւեալ օրը աշակերտը իւր վարպետի մօտ պատառեց իւր պայմանաթուղթը:

— Ինս կ'թողնեմ, որ ամենքը շնեն — պրծնեն, ես պարապ մնամ; — ասում էր նա, չեռանալով իւր վարպետից:

* *

Կօշկակարը, տեսնելով հարկաժողովին, թագինվում է: Հարկաժողովը հարցնում է նորա աշակերտին. Ու՞ր է ուստիգո: Աշակերտը տեղը ցոյց է տալիս և առատան բանտարկվում է: Յետոյ զրացի կօշկակարներն ասում էին աշակերտին.

— Տօ, ընչի՞ սորվացրիր տեղը:

— Եէ, ես էսօր տէրտէրին խոստովանուել եմ: Նոր հմա սուտ պտէի ասի, — պատճախանեց նա:

* *

Նոր այրիացածը կամենում էր ամուսնանալ իւր քէնու (կնոջ քոյր) հետ: Բայց չհասութիւնից ազատուելու համար՝ առաւ մի սպիտակ ջորի և 100 սոկի ու գնաց, ներկայացաւ եպիսկոպոսին: Սրբազնը սկզբումը թոյլ չէր տալիս, ասելով, թէ մեծ չհասութիւն կայ: Բայց յետոյ, տեսնելով բերած կաշտուկ, ասաց.

— Ամաց, որդի, ազգաբանութեանը նայեմ:

Եւ սկսեց նայել հետեւեալ ազգաբանութեանը, համարելով մատների վերայ.

«Ապիտակ-ջորի,

«Հարիւր-ոսկի.

«Մեռնի-կինը,

«Առնի-քէնին.

— Եէ՛ էս ութ էլաւ, որդի. օխոր պորտից անց
ա, կ'հասնի, կ'հասնի:

* *

Աւաղակն ումը պատահումէր, ասումէր ստա-
տելով.

— Փողերդ տուր, թէ չէ...: — Եւ այդ երկու խօս-
քով նա շատերին կողոպումէր: Մէկ անգամ, պա-
տահելով մի ձանապարհորդի, ասաց.

— Փողերդ տուր, թէ չէ...:

— Թէ չէ, ի՞նչ, — հարցրեց ձանապարհորդը վըս-
տահութեամբ:

— Ոչինչ, — ասաց աւաղակը, հեռանալով:

* *

^ Եինը, ամեն օր էշը ջուրը տանելուց յօդնե-
լով, մի գիշեր ասաց ամուսնուն.

— Էշը-որ ամեն օր ես ջուրը չտանեմ, չի՞ըլի,
որ մի օր էլ դու տանես. արի, զիդես՝ ինչ անենք:
Արի, էրկուս էլ ըսկի չխօսենք, ով առաջ խօսի,
էզուց նա տանի էշը:

— Լաւ. ասաց ամուսինը. և լրեցին:

Նոր էր մթնել. կինը դրացու տանը նստած
էր: Մէկը սորանց լուսամուտից փախցնումէ մի կառ.

պած բօշչու: Կինը, այդ նկատելով, տուն է, վազում
և ասում:

— Են ով փախաւ ըստեղանց, ա մարդ:

— Էշը ջուրը տար, էշը ջուրը տար, ... — ասաց
ամուսինը, ընդհատելով լուսթիւնը:

* *

▲ Հացկերոյթի ժամանակ տիրացուն ասաց սե-
ղանակիցներից մէկին.

— Են բութիկէն մի ինձ հասցրու:

— Քու հէրն էլ կունենար ինձակս նօքարներ,
չէ... — պատասխանեց սեղանակիցը, որի գլուխը բա-
ւական տաքացած էր:

— Եէ՛ այլ աստիճան լաւաբան, — ասաց տիրացուն ցած
ձայնով:

* *

▲ Երկու մարդ անց էին կենում մի շատ գժուար
ձանապարհով:

— Մուղայիթ կաց, Գրիգոր, վեր չ'ընկնես, շատ
փիս տեղն ենք, ասաց մէկը միւսին:

— Դու գնա, — պատասխան տուեց միւսը, — ես է-
րազում էսպէս գժուար տեղեր շատ եմ ման էկել:

* *

Ամառ, կալատողը (որմնադիր) գործից տռւն
վերագառնալով, ասաց իւր մօրը.

— Բարի իրիգուն, դէղի:

— Բարին արեիդ, որդի, — պատասխանում է
մայրը:

— Օ՛հ, օ՛հ, օ՛հ. էդ մի՛ ասի, դէզի, որ արեաց
շատ եմ էրուած, — վերաբերեց որդին:

* *

Բերդում բռնուածներին այցելութիւն անելով,
թագաւորը հարց ու փորձ էր անում նոցանից իւրաքանչերի յանցանքի մասին: Բայց, երբ ամենքը ուրացան իւրեանց յանցանքը և պատասխանեցին, թէ անմեղ են, նոցանից մէկը մի առ մի պատմեց ճշգութեամբ իւր բոլոր յանցանքը: Թագաւորը հաւանելով այդ ճշմարիտ խստովանութիւնը և կամենալով նորան աղատութիւն տալ, ձեռքի գաւազանով խփեց նորան մի քանի անգամ և, դուրս հանելով, ասաց.

— Այ, անիրաւ մեղաւոր, այս արդար մարդկերանց մէջ դու ի՞նչ գործ ունիս, դուրս կորի:

* *

— Թատրոնի կառավարիչը և օրացոյցը շատ նման են միմեանց:

— Ի՞նչպէս:

— Երկուսն էլ սուտ են խօսում, բայց չեն կարմը-րում:

* *

Ղարադաղին, լուսնի ծնունդը իւրեանց երկ-

ըումը տեսնելով, մի քանի օրից յետոյ նորան տեսնում է Վան քաղաքումը բաւական մեծացած, և Հիանալով ասում է.

— Ե՛յ, քէ մեռնիմ, Վանայ լուսին, ի՞նչ խօրատիկ լուսը կաէս. մեր գէս կճշատիկմ (փոքրիկ) էէր, բնաւ մէջը լուս չ'կէր:

* *

Մէկը ձիթավաճառին հարցրեց ձիթի գինը, բայց նա բաւական մեծ զին նշանակեց: Իսկ գնողը բարկանալով, ասաց.

— Վ նաս չունի. գիշերը լուսով կ'քննէք, առաւոտը լուսով վեր կ'կենանք:

* *

Մի մարդ սովորութիւն էր արել մէկ-թէյ խմելուց առաջ թքել գետնին, մէկ-խմելուց յետոյ: Եթէ սորան հարցրին պատճառը, պատասխանեց.

— Առաջին անգամ այն մարդուն եմ թքում, որ չայ խմելու կարողութիւն ունի և անմոռ: Իսկ վերջին անգամ այն մարդուն եմ թքում: Որ չայ խմելու կարողութիւն չունի և անմոռ: է:

* *

Հարսանիքատանը մի պարզամիտ վարդու մի բաժակ զինի առւեցին: Բաժալլ ձեռքը առնելով և մինչեւ գետին խնարհնով, նա պատ:

— Աղաներ, սադ մնաք. ես ձեր դլուսին եմ, դուք՝ իմ ոտներս:

* *

Մէկը գերծում էր (խուզում էր) մի մեղքեցու
մօրուքը: Մեղքեցին անդադար կրկնում էր. պառ
տուր» (երես-երես խուզիր): Օտար սափրավէրն էլ
անխնայ գերծում էր մօրուքը: Մեղքեցու համբերու-
թիւնը հատնելով, ձայն տուեց.

— Տօ, տաւար, քեզ չեմ ասում իր որոշ:

— Ախմախ, —պատասխանեց սափրավէրը, — այն-
քան խոր տուի մօրուքդ, որ դառաւ հնձած արտ,
էլ խոր տամ:

* *

Ջրօհնէքի օրը թուրքը հարցրեց Հային.

— Ասում են, թէ երբ ձեր խաչը ջուրն է ընկ-
նում, եղանակը կակղում է. բաս ո՞ւր է:

— Դրա պատճառն այն է, որ գեռ խաչը ջրից
չենք հանել. — պատասխանեց Հայն:

* *

~~Պարսկաստանում սովորութիւն~~ կայ, որ հարա-
նետանը քահանան հալաւն օրհնում է և հրափ-
րուածնելը աջահամբոյր են տալիս նորան: — Մի հար-
սանիքում, հալաւն օրհնելուց յետոյ, քահանան
մաշտոցը զնում է սեղանի վերայ և փոքր ժամա-
նակից յետոյ նորա վերայ միայն միքանի հատ սև
փող է գտնում: Փողահարը փշում է փողը և կար-
դով սկսում են պար գալ: Թմբկահարի շաբաշը ձայն
տալու ժամանակը քահանան նկատում է, որ փո-
ղահարի առաջը սպիտակ փողեր են ձգում: Քահա-

նան առ ժամանակ զսպում է իւր բարկոթիւնը,
բայց, տեսնելով, որ հիւրերի առատաձեռնութիւնը
չափից անցնում է, այլ ևս չէ կարողանում համբե-
րել և ասում է փողահարին, որ մի փոքր լռեն:
Յետոյ, դառնալով դէպի թմբկահարը, ասում է.

— Դհօլչե, քո հողդ կենայ իմ գլխին, դհօլչե
հողը—մաշտոցիս գլխին: (փողահարին) Զուռնաչի,
քո հողդ—տիրացուիս գլխին, զուռնիդ հողը—բուր-
վառի գլխին: Իէ, միաք բարով: — Ասում է և դուրս
է գնում:

* *

Հայ զիւղացին, առաջին անգամ մտնելով և.
Պօլիս, փողոցում շրջելիս լսեց մի թուրք մրգավա-
ճառի ձայնը, որ իւր թութը գովասանելով, ձայն էր
տալիս. «Թաղա թութ»: Դիւղացին, կարծելով, թէ
ասում է մոր-եկին բռնիթ, սկսեց կուչ գալ և թա-
գուն ման գալ: Բայց շուտով միւս կողմից լսեց մի
ձայն, որ կանչում էր. «Կերեկիս, կերեկիս» (կանաչու
անուն), զիւղացին, շատացնելով իւր երկիւղը, ա-
ւելի կուչ եկաւ, որ չ'երեկ: Յանկարծ երրորդ կա-
նաչեվածառը միւս ծայրից բարձր ձայնով կանչեց.
«Ել-փախ, ել-փախ» (կանաչու անուն), — զիւղացին
այլ ևս կասկած չ'ունենալով, որ ամենքը իւր վերայ
են խօսում, ելու—կարու—

* *

ԱՄՈՒՍԻՆԸ: ԱՇ կնիկ, այսօր մի նալ (պայտ) գտայ. լաւ պահիր, յետոյ երեք նալ էլ մի տեղեց կ'զանենք. մի ձի էլ կ'ձնարենք, կ'հեծնենք, միասին Երուսաղէմ կ'զնանք։ ԿԻՆԸ: Լաւ. Երուսաղէմից-որ վերադառնանք, ձին կուտահս, որ գնամ, հերանցս տեսնեմ։ Ամուսինը, բարկանալով կնոջ վերայ, մի լաւ ծեծում է. ԱՄՈՒՍԻՆԸ: Չին բեղարսծ, դու չեծնես, գնաս հերանցը։

* *

Քահանան ժողովրդին քարողել էր, որ արեխաներով եկեղեցի չմտնեն։ Քարողի վերջը քահանան տրեխաներով բարձրացաւ սեղանը և ժողովրդից մէկը ձայն տուեց.

— Տէր-հայր, բա քեզ համար մեղք չե՞՞, որ արեխաներով բարձրացար տաճարը։

— Օրհնեալ լինիս, — ասաց քահանան, — չե՞ս գիտի, որ իմ տրեխաները մատաղի կաշուից են շնուած։

* *

Քաղաքացին, իւր էշը քշելու ժամանակ, կամենալով ծաղրել նոյն բողենին իւր մօտից անցնող գիւղացուն, ձայն տուեց իւր իշուն։

— Չո՞, գիւղացի աղքերս, չո՞։

— Լո՞յ ի՞նչպէս աղքէր էք, որ իրար նման չէք, — պատասխանեց գիւղացին։

* *

Ամնկավարժական ժողովում, Պետրոսը և Մարտիրոսը մի հարցի վերայ երկար ժամանակ վիճում էին։ Նախագահը, կամենալով վերջ տալ այդ վիճին, ձայներ ժողովեց և հարցրեց ուսուցիչներից մէկին. — Զեր կարծիքն ի՞նչպէս է, պ. Աթարեանց։ — Ես համաձայն եմ սլ. Պետրոսի և պ. Մարտիրոսի կարծիքին, — պատասխանեց ժողովի անդամը, սթափուելով իւր մասնաւոր մուածմունքից։

* *

Մէկը հարցնում է իւր դպացուհուն.

— Մայրիկ, ասում են, թէ շունը որդուդ ոտը կծել է. իրա՞ւ է։

Հա. աղպէր Անտօն, — պատասխանեց մայրիկը, վոնց-որ դու շունն ըլլիս, ես Ադամը (որդին), ըստի միամիտ կանգնած. դու ըտակից «Հաֆ» էնես ու ինձ կ'ծես։ Էսէնց է էղել։

* *

— Բարեգործութիւն արա, որ դժոխք չ'գնաս, — ասացին մի ծերունու։

— Տօ, չեմ գինա, ի՞նչ կ'զուցէք։ Յորի չ'ըմ էրթայ դժոխք, օր թէ կաթուղիկոս ըսես՝ յունա է, էլ փաշա, էլ մահմատ-բէզ, էլ զանգին աղէք, յըմմէն յունա դժոխն են։ Արքայութիւն վո՞վ կայ. էտմլս (ինձպէս) էրկու աղքատ եա, էղնի, եա չ'եղնի, — պատասխանեց ծերունին։

* *

Որովհետև ամուսինը գիշերով շատ ուշ էր տուն գնում, ուստի մէկ անգամ կինն ասաց.

— Քա, յո՞րի էտա խտոր ուշացար. աչքերս ճռութաւ քու ձամբախ երիշկելով. քեսնի շուն խաչեց, ես զիցայ-կարօսէ (ամուսնի անունը), քանի շուն խաչեց, ես զիցայ-կարօս է:

^{*} * * * *
▲ Չորս տիրացու, թիֆլիսում իւրեանց գրպանները թափ աալուց յետոյ, ապագայի քաղցր յոյսերով լցուած՝ ձանապարհ ընկան դէպի հաղպատքահանայ ձեռնադրուելու:

Այստեղ եպիսկոպոսը՝ նոցա սարկաւագութեան ասաիձան աալով, իւրաքանչեւրից 25 ո. պահանջեց ձեռնադրութեան համար: Հազիւ թէ նոցա ունեցածը կարողանար լրացնել սրբազնի պահանջը, որի մասին նոքա ոչինչ հոգացողութիւն չէին արել: Սարկաւագներից մէկը, որ ամենից չքաւորն էր, հանեց իւր փողի քսակը և, դնելով եպիսկոպոսի առաջելը, ասաց.

— Սրբազն հայր, ըհը, ես 16 մանէթն ա մնացել գուն ու քու Աստուածը, ինչ ուղես, արա, զրանից աւել ոչինչ չ'ունեմ:

— Դէ, լաւ. 20 մանէթ տուր, բաւական է, ասաց սրբազնը:

— Զունիմ, սրբազն տէր:

— Ուրեմն, և մանէթի բարաթ տուր,— ասաց եպիսկոպոսը:

Սարկաւագն ուրախութիւնով և մանէթի պարտաթուղթ զրեց և տուեց սրբազնին:

— Ձեռնադրութիւնն աւարտելուց յետոյ, — ասաց եպիսկոպոսը, — կ' կանգնէք սեղանի առաջելը, մօտերնիդ գանձանակի խօնչա կ' դնեն, ժողովրդականք կ' համբուրեն ձեռքներդ և զանձանակ կ' զցեն:

— Մենք պէտք է զցե՞նք, — հարցրեց չքաւորսարկաւագը զարմանալով, (որովհետև սխալ էր հասկացել սրբազնի խօսքերը) — չէ. ես էլ ոչինչ չ'ունեմ, չեմ կարող, թէկուզ հոգիս հանէք:

— Բարով զցի, մես չունի, — ասաց նորա ընկերը:

* *

Գիւղացին իւր տանիքի վերայ կանգնած՝ տեսնում է, որ հեռուից մի ձիաւոր է անց կենում, որի ձին շատ նման է իւր ձիուն: Կասկածելով, մի՛ դուցէ, իւր ձին լինի, նա ցած է գալիս տանիքից, ախոռից դուրս է հանում իւր ձին, հեծնում է և քշում է ձիաւորի ետելից: Բայց, ձանաշելով, որ իւր ձին չէր, նա ուրախութիւնով տուն է վերադառնում:

* *

Քահանան մի քանի մարդկանց հետ զբոսնը-լով լծի եղելքում, յանկարծ ուր սահեցաւ և ընկաւ ջուրը:

— Ձեռքդ տուր, ձեռքդ տուր, տէր-տէր, — ձայն տուեցին միւսները:

Իսկ քահանան, կարծելով, թէ իւրեանից բան
են ուզում, այնպէս էր ձեւանում, որպէս թէ չէր
լսում: Յետոյ, խօսքը փոխելով, ընկերները կանչեցին.

— Առ, առ, տէր-տէր:

Քահանան խիստն ձեռքը պարզեց մի բան ստա-
նալու յուսով: Խոկ ընկերները բռնեցին նորա ձեռ-
քից և լջից դուրս հանեցին:

* *

— Արի միասին մի շարադրութիւն գրենք. զրքի
արդիւնքը քեզ լինի:

— Եշը ձիու հետ չեն լծում:

— Չես գրում, մի զրիւ բայց քեզ ով իրաւունք
տուեց ինձ «ձի» կոչելու:

* *

Ժամերգութիւնից յետոյ, մի ծերունի մօտե-
նալով աւետարան կարգացող քահանային, ասաց
հառաջելով. «Տէր-խայր, թէ էդ յըմմէն զորդ է, վայ
մըզեկ, վայ մըզ խարսներուն:»

* *

Եօթ վարդապետ հաւաքուեցան, մէկ աղջիկ
մղբուեցին. (սխալուելով) անունը «Կիրակոս» դրին:

* *

○ Շատ արաղ (օղի) խմող մարդուն ասացին.
— Դու այդպէս անչափ արաղ խմելով, շուտով
կմեռնես:

— Զէէ. չեմ մեռնիլ — ասաց հարբեցողը, — երբ
հոգէառ հրեշտակը կը գայ հոգիս առնելու, մատով
կսեղմի փորիս վերայ և կասի. սա ճարտ չէ, այսուե
տին է, և կ'հեռանայ ինձնից:

* *

Մի տաճկաստանցի հայի հարցնում են.

— Չեր երկրում դգում բումնում է:

— Կ'ցանես, կբումնի. չես ցանի, չի բումնի, —
պատասխաննեց նա:

* *

Մէկը կամենում էր բաղանիք գնալ: Բայց, վա-
խենալով, մի՛ գուցէ, կորչէր մերկ մարդկերանց մէջ՝
նա իւր միջքեց մի փոքրիկ տիկ կապեց և գնաց:
Բաղանիքում փոքր ինչ լողանալուց յետոյ, նա կը-
կին տիկը կապեց միջքին և երեսի վերայ տարա-
ծուեցաւ գետին: Մէկը զգուշութիւնով յետ արեց
տիկը և կապեց իւր միջքին: Փոքր ժամանակից յե-
տոյ նա վեր կացաւ, բայց, ձեռքը տանելով դէպի
միջքը՝ տիկը չ'գտաւ: Որոնելով իւր տիկը, նա դտաւ
նորան մի մարդու միջքին և մասձում էր իւր մէջ.

— Թէ էս ես եմ, բաս սա ով է. թէ սա ես եմ,
բաս ես ով եմ:

* *

Յիմարը, տեսնելով մի վատ հաջող շուն, ասաց.
«Անշնորհք» շուն ըլեմ ու ըտէնց հաջեթին:

* *

Քահանան գիւղացուց մի քանի կօպէկ է առ-
նում և նորա կորած կովի համար գէլ-կապը է ա-
նում, որ նա գիշերը գայլերի կերակուր չ'գառնայ:
Առաւոտը գիւղացին գնում է դաշտը, ուր միայն
իւր կովի ոսկորներն է գտնում և, արտասուելով
գնում է քահանայի մօտ ու ասում:

— Տնաշէնի տէր-տէր, էդ իմա՞լ գէլ-կապ էիր է-
րել օր հէջ կովի պոչ էջ չըն թօրկէ:

Քահանան, նայելով իւր գրած թղթին (աղօթք),
հառաշելով պատասխանում է գիւղացուն:

— Վայ, սանախէր Մկօ, իմ լուս քոռնայ. բերան
թորկել պոչն եմ կապել: Հըմա, հէջ թալաշ մ'էնա,
չուր լուս, գիլան յըմմէն կ'տրաքին:

* *

Հարկաժողովը գիւղացիներին շատ նեղացնում
էր, անգամ ծեծելով էր ժողովում հարկը: Սորան մի
ձար անելու համար գիւղացիները մոածեցին գործ
գնել հետեւել հնարքը: Ժողովեցին իւրեանց միջեց
բոլոր մի տարուայ հարկը, ածեցին մի փոքրիկ պարկի
մէջ և տարան, կախ արին մի կամրջեց, որի վերայով
պէտք է անցնէր հարկաժողովը:

* *

Պարտատէրը մօնելով պարտապանի տունը
փողի ստանալու համար, ողջունեց նորան և նստեց
նորա կողքին:
— Ինչի՞ համար էք եկել — հարցրեց պարտապանը:

— Զեզ տեսութիւն անելու, — պատասխանեց պար-
տատէրը քաղաքավարութիւնով:

Պարտապանը կանգնեց ոսի վերայ, մէկ ան-
գամ պտուտ եկաւ հիւրի առաջելը և ասաց նորան:

— Հօ, տէսոտ, դէ գնացէք:

* *

Կոնսիստորիայում ծառայում էր մէկ անշնորհք
դրագիր: Ծանօթը հարցնում է նորան:

— Ամսական ո՞րքան ես ստանում:

— Յ մանէթ, — պատասխանում է գրագիրը, — Յ մա-
նէթի էլ թուղթ եմ փշայնում, էդ քեզ Յ մանէթ:

* *

Քահանան իւր որդուն ուղարկում է մեռելա-
տունը կողոպուտն ստանալու: Բաց անելով մէկ ան-
ծանօթ տան դուռը, նա ասում է մի պառաւի.

— Բարի իրիգուն. գէդի, կողոպուրտի տունն էս ա՞,
մեռելը տուէք, տանեմ:

— Որդի, — ասաց պառաւը, — մեռեն էրեգ հէրդ
տարաւ. կողոպուրտն ես ուզո՞մ, տար:

— Ա՝ և, շշկուեցի, — ասաց նա, — բարի իրիգուն.
գէդի, մեռելի տունն էս ա՞,
կողոպուրտը տուէք,
տանեմ:

* *

Ա. Լուսաւորչի թոռան Գրիգորիսի անունով մի
վանք կայ շինուած Աղուանից աշխարհի մի Ամա-

բասա անունով գիւղում: Տեղացի Թուրքերն ևս, հաւատալով և յարգելով տուրք նահատակին, ուխտեն գնումնորա վանքը, որին անուանել են «Մարտա»:

Այ կին Թուրքերից մի կով է գողանում և Թուրքերը պահանջում են նորանից կովը: Իսկ կինն ուրանում է գողութիւնը և Թուրքերը նորան տառնում են Մարտա, երդում տարու: Կինը, չոփելով նահատակի գերեզմանի մօտ, ձեռները դէպի երկնք է բարձրացնում և ասում:

«Յառայ եմ քեզ, Մարտա,

«Մին կով ամ կողացալ աս սարսա.

«Մին տօձ ամ լքրալ մին կարսա,

«Դուն անես աս Թուրքերի գիւտնն, ով Մարտա»:

—Այ քշի, անդիչմա, դուր, գէթ (այ մարդ մի երդուիլ, վերկաց գնա) տասցին Թուրքերը, հաւատալով կնոջ երդումին:

* *

Գահանան եկեղեցում պատկ էր կատարում: —Որդեակ, մինչեւ մահը տէր ես, —հարցրեց քահանան:

—Ապարն ա զիդիլ (հայրս զիտէ), —պատասխանց փեսան:

* *

▲ Որդին, կամենալով փորձել իւր խորթ մօր սէրը դէպի ինքը բռնեց մի աքաղաղ, քաղեց նորա

փետուրները և մերկ աքաղաղը փակեց պահարանում: Իսկ ինքը տնք-տնքալով պառկեց անկողնում:

—Ի՞նչդ է ցտում, Սարգիս ջան, —հարցնում է խորթ մայրը:

—Սաղ ջանց աւումէ, Մարթա ջան, —պատասխանում է որդին, —Հոգիս գուս է գալիս, մեռնում եմ, օգնիր ինձ...:

—Իմ ջանը ցաւի, թող իմ հոգին գուս գայ, ես մեռնեմ, —ասում էր մայրը աղիողում ձայնով, —լու կըլիս, որդի ջան...:

—Ել ի՞նչ լաւ կըլիմ, հրէն հոգիառս էկել է:

—Ուր է, ուր:

—Գահանջնումն է:

Մայրը բաց արեց պահարանի գուռը և, տեսնելով հոգեառը, սարսեց բոլոր մարմնով և ձայն տուեց.

—Վ ոյ, ես չեմ հիւանդը, ում հմա էկել ես, նրան տասապ:

Հայոց արք մայուս մայուս * Ամայուս մայուս
ունաւու որս ու նախու ունաւու ունաւու ունաւու
Հայոց-սուրբ, —ասում էր եպիսկոպոսը մի շատ
ժլատ վարդապետի, —եկ, քեզ ուղարկեմ Հաղպատ,
այնտեղ վանահայրութիւն արա: Այնտեղ հարիւր
անգամ աւելի լաւ կընի քեզ համար, քան էջմիած-
նումը. օդը լաւ, ջուրը լաւ, արդիւնքը լաւ. Եւ ի՞նչ
կուզես:

* *

— Բաս, տաշեղներս ի՞նչ անեմ, Սրբադան, — պատասխանեց վարդապետը:

* * *

Կաթողիկոսի գալստեանը սպասելով, մի խոյեցի առում էր միւսին.

— Խոգեոր տէր խոգեոր տէր ի. խոգեոր տէրն ինչդ ազգի, Խաջ ի, Տաճիկ ի, Նասրանի՛ ի....

* * *

Մէկ երիտասարդ, որ բաւական շւայլ կեանք էր անցկացնում; մի քանի մարդկերանց մէջ մէկի ձեռին տէրողորմեա տեսնելով, ասաց.

— Թէ կարելի է, էդ տէրողորմիէն ջերդ զիր:

— Խնչու, — Հարցը ին նորան:

— Որովհետեւ Աստուած միտս է գալիս, — պատասխանեց նա:

* * *

Գիւղացու փարախից գողացան նորա բոլոր ոչ խարները: Ամբողջ զիւղը խօսում էր այս անսօվոր պատահմանի վերայ, բայց, չկարողանալով գողը գտնել զիւղիք զիմեցին իւրեանց տանուաթիրոջ աղջկան, որ իւր իմաստաւթիւնով յայսնի էր զիւղին:

— Ո՞վ որ փարախ զուռը բաց է արել, նա է զողացիւ ոչխարները, — պատասխանեց աղջիկը:

Կոր խելքի եկան զիւղացիք, որ զուռը բաց անողը կլինէր զողացած:

* * *

Քարոզի ժամանակ վարդապետը պատառմում էր Քրիստոսի արած հրաշքներից մէկը և, սխալուելով՝ ասաց.

— Քրիստոս, տէրն մեր, 5000 նկանուկով ծ մարդ կշապերեց:

— Լու է, որ չպատռուեցին, հայր-սուրբ, — ձայն տուեց ժողովրդականներից մէկը:

— Հրաշքն էլ գորանումն էէ: — պատասխանեց վարդապետը:

* * *

Քահանայի աղջիկը, որի 25 տարին արդէն լըսացել էր, մէկ օր, կրակարանի մօտ նստած՝ կծիկ էր ոլորում, և ասում:

«Կծիկ կ'անեմ, կծիկ կ'անեմ;

«Ես մի տարին էլ մտիկ կ'անեմ:

«Ատէր, չեմ կենալ քու տանը,

«Հարգիդ (ամենեին) անիլ չեմ քու բանը»:

* * *

Մէկ էֆէնդի իւր ոչխարները պահ առւեց մի հովուի: Անցաւ մի տարի և հովիւր վեր առնելով մի թաշկինակով մածուն, գնաց իւր տիրոջը հաշիւ տալու:

Էֆէնդին: Օ՛օ, տեսնեմ, ինչ ըրեր եա:

Հնիվիին: Էֆէնդը, եթմիշ հինգ հոգի ջուրը տար սաւ, սէքսէն իննը սարէն՝ ի փար թա-

փան ձվորերը, զողսէն երեք գալերը
կերան...:

Տէրը բարկանսլով հովուի վերայ, առաւ
մածունը և խփեց նորա երեսին: Իսկ
հովիւը սրբերդ երեսը, ասաց.

—Փառ քիեզ, Ասուած, վէր տէրմօնէց մօն Ճեր-
մակ երես ելայ:

* *

Մրգավաճառը բոխ զնելով Մթիուլներից, կըշ-
ռում էր բոխը: Պատահմունքով փթանոց քարը
ջուրն ընկաւ:

—Կայեցէք այս անիրաւ Հային, — ձայն տուեց
Մթիուը, — փթանոցը ջուրը գցեց, որ թրջուի և աշ-
ւելի ծանրանայ:

* *

Գիւղի քահանան, որ իւր կեանքում առաջին
անգամ պէտք է քարոզէր ժողովրդին, կիւրակէ ճա-
շեց յետոյ մոտաւ եկեղեցին, փակեց դռները, բարձ-
րացաւ սեղանը և սկսեց կրկնութիւն անել: Եկեղե-
ցում, յայտնի բան է, ոչոք չ'կար:

—Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ամէն, —
ասաց նոր ատենաբանը և սկսեց իւր քարոզը:

Երկար ժամանակ նա քարոզում էր և յան-
կարծ, քարոզի մէջ, որպէս թէ լսելով խոնուած
կանանց աղմուկը և երեխաների խօսակցութիւնը,
ձայն տուեց դատարկ եկեղեցում:

Այ կըտորուածներ: ձեզ հմար չեմ ասո՞ւմ,
ականջ դրէք է, ի՞նչ էլաւ ձեզ:

Պառաւը եւր այծերից կմած կաթի մէջ ջուր

էր խառնում և ծախում: Մէկ սաստիկ անձրեային
օր, նորա թուրը, որ արածեցնում էր այծերը, մե-
նակ տուն գնաց:

—Ճերն ո՞ր են, որդի, — ձայն տուեց պառաւը:

—Նանի, — պատասխանեց փոքրիկ թոռը, — էծերը
սարը բարձրացան, էն ջրերը, որ դու կաթնի հետ
խառնում էիր, դիսի մէտի մօդ էլան, թափուեցին
սարիցը, ու իծաները բոլորն էլ ներքի քննց, տարաւ:

— Եղինակը տպագրելու համար մի նոր աշխա-

տութիւն էր պատրաստել որի մէջ, ի միջի այլոց,
երկար բացատրութիւններով մեկնել էր այն օրէսքը,
որ բարձրահասակ, խարտեաշ մազերաւոր և ճաղար
աշքերաւոր մարդք՝ խարդախ, խաբեբայ և անտա-
նելի բնաւորութեան տէր կլինի: Մէկ անգամ, ճա-
նապարհորդելով զանազան քաղաքներ, նա հիւր ըն-
կաւ մի մարդու տանը, Այդ տանտիրոջ բնաւորու-
թեան մէջ կարելի էր գտնել բոլոր վերօյիշեալ փառ
յատկութիւնները: Նկատելով նորա արտաքին նշան-
ները, մեր խեղջ հեղինեակը շատ զղջացաւ նորա տա-
նը հիւր ընկնելու մասին: Բայց նորա կարծածին

Հակառակ, տանտէրը շատ սիրով և քաղցրութիւնով
հիւրասիրեց նորան:

Այս հակառակ երեսութիւնը վերայ զարմանալով,
հեղինակն արգել զգում էր, որ իւր զրածը սխալ
էր և ստիպուած էր ջնջելու: Նորա ուշք ու միտքը
միայն իւր աշխատութեան ոչնչանալու վերայ էր,
որովհետեւ հետպհետէ, անսպասելի կերպով մեծամեծ
պատիւներ էր ստանում իւր հրաւիրողից: Այլ ևս
չկարողանալով տանել այս գժուար դրութեանը, նա
շուտով գուրս գնաց այդ տնից և ուղերդվում էր
գէպի իւր քաղաքը՝ զրածը ջնջելու: Նա վեր տառ
իւր ձանապարհորդական պարկը և ձանապարհ ըն-
կաւ: Հազիւ թէ նա մի ժամուայ ձանապարհ հեռա-
ցել էր, ահա, տանտէրը ձիով հասաւ նորա ետեից:
—Անամօթ մարդ, —ձայն տուեց ձիաւորը, —իմ
տանս այնքան պատիւ ստացար և իմ արծաթէ թան
էլ գողանում ե՞ս:

—Ես ամենեմն գող չեմ, պարոն, —պատասխա-
նեց հեղինակը, որոնիր, ինչ տեղ կամենաս:

—Հապա, այս ի՞նչ է, ասաց խարաւաշ մարդը,
հանելով ձանապարհորդի պարկից արծաթեայ թասը,
որ ինքն տառաջուց պահել էր նորս պարկում: և
սկսեց անփնտ կերպով ծեծել նորան իւր ձիու մըտ-
րակով:

—Ողբերդի քո հօրը, լաւ ծեծիր, խփիր, —ասում

էր հեղինակը. խփիր, լաւ խփիր, որ գրածս չ'ջըն-
ջեմ, , խփիր:

* *

աշուր արտանիքում, կանանց մէջ, պառաւած օրի-
որդն ասում էր. «Հօր-քօյր էլայ, մօր-քօյր էլայ, մի-
քեռակին էլ ընէի՛...»:

* *

Խարազը (կօշկակար) զարաղեց (խաղաղորդ)
կաշի էր տարել լսոյց երկար ժամանակ չէր կարո-
ղանում նորա դինը վճարել: Աւ ամեն անդամ, երբ
խարազը լսում էր դարաղի գալը, խկոյն թագնվում
էր իւր խանութում: Մէկ օր, խարազն այլ ևս ժա-
մանակ շունեցաւ թագնուելու, դարաղը կանգնեց
գուքանում և սկսեց փողը պահանջել:

—Վտամ, եղբայր, —ասաց խարազը, —կօշկիները
պատրաստել եմ: գէ զու էլ համբերիր, ծախեմ, ու
փողդ տամ, էլ ի...:

—Ախար, մինչեւ ո՞ր օրը գկամ, կամ ամելով
պէտք է խարես, —պատասխանեց խաղաղորդը, —մէկ
օր նշանակիր, որ ես գամ ու անպատճառ ստանամ:

—Ուստի, —ձայն տուեց միւս ծայրից կօշկակարի
աշակելուր, —զրունար քեզ ասեմ, իմ ուսուէն էն
վախար, կտայ քու փողը, երբ որ իրան դարձահը
կ'կանաչի:

—Լաւ, էն ժմաննակը կ'զամ, ասաց պարուտ-
տէրը և հեռացաւ:

Առուս գուլս, գնալուց յետոյ կօշկակարը գեսդ
նից մի փայտ վեր առաւ և, խփելով աշակերտին,
ասաց բարկացած.

— Տօ, փուժ կենդանի, կաշին թաց, դապդահա՝
փէտ. էլաւ որ կանաչեց, իժում որտղանց տամնրա
փողը:

* * *

Ամուսինը տուն գնաց, տեսաւ, որ կինը մէկ
ամսնում իւղ է ածել և հացով ուտում է:

— Եղ ի՞նչ ես անում, ա կնիկ, — հարցրեց նորան.
Հէիր կարող մի բան էփել...

— Ի՞նչ անեմ, — ասաց կինը, — եղոք թանկ է,
բրինձ էլ չունենք, որ փլաւ էփեի, ու ճմբուռ շե-
նեցի:

— Եղս թանկ է, ճմբուռն էժան, հասա՛, — վերա-
բերեց ամուսինը:

* * *

Երկու բարեկամ նամակավրութիւն ունէին
միմեանց հետ, նոցանից մէկը խնդրեց միւսին, որ
նամակը գրաբառ գրէր: Հետեւ անգամ նա տուաց
գաւ այս նամակը.

« Այ իշչ Մարիս չան. յա անգամն, ի բաց մորակեալ գօշատութիւնս յի-
նէն կարմրագունեղ ուղերձից ծառոց կամ տնկոց,
վերաբերելոց աննման մարդկանց՝ անկելոց ի գուբա
պասամարտիկ տարաբողջութեան: Անուտանդ չկա»

ամենալով մաքառել լնդդէմ խորշակահար թշուա-
ռութեանց՝ ունիմ կատարել զգաբառ առաջարկու-
թիւնս ձեր: Ուստի, միամիտ մտադրութեամբ մնամք
Շի սրտի մերում և ՚ի միսիթարութիւն հայրենեաց
մերոց և յօգուտ եկեղեցւոյ հայաստանի. ամէն:
Ողջ լեռ:»

Զեր բարեկամ

Զ. Մաշհոսեանց:

առ ոչ զարդ ապացոյն ։ Աջը այլ տեսական խորհիման
տակածութեա ուղարքը բկառած և միա բառեց ու ոս
զարդ վերաբերեա տարածի գառա ։ բան սարդին
բարձր ։ մաս է տարածին ու մ ։ Առաջ գործ ե
տվեա գառա ։ գառա ։ առաջ կա ։ Ա ըստա
օրինակ օրինակ

առ ով ու այլ ապացոյն միաբար առաջ այլու ։
այլուն ու առա
Ա զարդ յան մասի քար քար մասը ապացու ։
ու ապացու ու ապացու ըստ ու ապացու ։
ապացու քար քար ու ապացու ։ ապացու գառա
ապացու ապացու գառա ։ ապացու ։ ապացու գառա
։ Ա. ՄԱՍԻՆ

Օտարազգի անեկոտներ:

Ելք նապօլէնիր տուն էր շինել տալիս Եղբա
կղումը, յանկարծ երկորդ արկից վայր ընկաւ
որմնադիրը և սաստիկ ցաւ զգաց մէջքումը։ Այ
լուրը համելով նապօլէնին, կայսրն եկաւ որմնա
զրի մօտ և մի փոքր հարց ու փորձ անելուց յետոյ
ասաց նորան։

— Ո՞ի վախենալ, այս փորձանքը շատ երկիւ զալ
չէ։ Ես աւելի մեծ բարյութեանից ընկայ, բայց, տեսնում
եմ, այժմ ոսի փերայ կանգնած եմ։

* * *

Մէկը իւր մահից յետոյ թողել էր չետիեալ
կտակը, ևս ու կայք ունիմ, ու փող, իսկ պարագա
շատ է, մնացածն, ով ուզում է, թող բաժանի աղ-
քատներին։

* * *

Մօլլա-նասր-էդդինի պարտատէլներից մէկն առում էր մօլլային.

—Եղբայր, էքան գնալ-գալ կ'լինի՞. Է՞րբ պէտք է տաս իմ փողը:

—Դէ, շնուտ արէք,—ասաց մօլլան իւր կնոջն ու որդքերանցը, —գնացէք, փշեր տնկեցէք ոչխար անց-կացնելու ձանապարհի երկու կողմում...:

—Այ մօլլա, —ձայն տուեց պարտատէլը, —ես փողս եմ ուզում, դու ի՞նչեր ես պատմում:

—Դէ, ես էլ փողեկ վրայ եմ խօսում էլի՛, ասաց մօլլան: Այ, փշերը կտնին. գարնանն ու աշնանը, ոչխարներն անց կացնելիս, 'ի հարկէ, փշերին կր-քսուեն ու իրանց բրդից փշերի վերայ կ'թողնեն: Մենք էլ կ'գնանք, բուրդը կ'հաւաքենք. կ'մանենք, կ'գործենք, կ'ծախենք ու քո փողն իր շահովը քեզ կ'տանք:

Պարտատէլը, այդ լսելով, պինդ ծիծաղեց:

—Հալբա թէ կ'ծիծաղես, —ասաց մօլլան, —նիսիէդ էլաւ համա՞:

**

**

Փլատը մագագինում ձեռնոցներ էր առնում. և հագնելով, հարցրեց.

—Սա ինչի՞ կաշի է:

—Շան կաշի է, —պատասխանեց ծախողը:

—Եղան կաշուից չունէք, —հարցրեց ժլատը:

**

Մէկը իւր շանը սովորեցրել էր, որ ամեն օր վաղէր փոստը, Յ վերսա հեռաւովութեան վերայ և բերել լրագրեր ու նամակներ: Մէկ առաւօտ, շոնը նամակներ բերեց, բայց լրագիր չ'բերեց: Տէրը նորան յետ դարձրեց, իսկ շոնը կրկին վերագարձաւ առանց լրագրի: Յետոյ, տէրն ինքը գնաց փոստը և հարց-րեց վերատեսչն:

—Ինչո՞ւ իմ շանը „Tims“ չէք տուել:

—Այսօր „Tims“ չէ առացուել պարոն, —պա-տասխանեց վերատեսուը: իսկ ես ձեր շանն առա-ջարկեցի „Daily News“ էլ. „Standart“ էլ. բայց նա ոչ մէկը չ'վեր առաւ:

* * *

Աղէքսանդր Լկայսրը լսելով, որ Կրիլօվը թուղթ է խաղում, ասաց.

—Ես չեմ ցաւում այն փողերի վերայ, որ տա-նուլ է տալիս Կրիլօվը, այլ ցաւում եմ, մի գուցէ նա տանուլ տայ իւր լսելը:

* * *

ԱՅՅԵԼՈՒՆ: Դուք ունիք նիւտօնի գանգը: ՄՈՒԶԵՈՒՄԻ ՏԵՍՈՒՑԼ: ՈՉ չ'ունինք:

ԱՅՅԵԼՈՒՆ: Զարմացք է, ուրիշ մուզէ-ումներում ամենքն ունին, իսկ այստեղ չ'կայ:

**

Փեսան միշտ գանգապում էր աներոջը իւր կնոջ մասին: Եւ, երբ մէկ անգամ ևս կինը համբեռութիւնից հանեց նորան, նա կրկին գանգատուեցաւ: Աներն ասաց.

— Ասացէք իմ աղջկան, որ ես կ'զբկեմ նորան իւր ժառանգութիւնից, իթէ կրկին կ'սեղացնի ձեզ: Այն օրից փեսան այլ ես չէր համարձակվում գանգատուել:

* *

Տեսնելով մրգավաճառի կրպակում կախ արած երկայն ու կարմիր տաք-զեղերը (աղլպեղ), մի Քիւրդ գնեց մի քանի հօտէիր և, նատելով պատահ տակը, ու տում էր ու աչքերից արտասուք՝ վլորում։

— Պէ՞ն ածա, ի՞նչպէս ես ուտում, — ասաց նորան մէկը:

— Կամուլ թօքիւլիմ, ախլը բու զահրումարս փուլ վէրմիշամ, — պատասխանեց Քիւրդը:

* *

— Բարձվ, պարո՞ն Ստեփան, ի՞նչպէս փոխուել էք: Բայց ես Ստեփանը չեմ: Անունն էլ է փոխել, զարմացք է:

* *

ԴԱՆՕԹԸ: Տէր-Հայր, քահանայ ձեռնադրուելու համար ի՞նչ է հարկաւոր:

ՔԱՀԱՆԱՆ: Երեք բան:

ԴԱՆՕԹԸ: Ո՞րոնք են: Ասած այս գլուխուանութիւնը ՔԱՀԱՆԱՆ: Առաջինը կոչ, երկրորդը փող և երրորդը գարձեալ ՓՈԴ:

* *

Փիլիսոփան իւր համար տուն շինելիս առաստաղը քարեց, իսկ յատակը կատով ծեփեց: Երբ հարցըրին պատճառը, նա պատասխան տուեց.

— Որովհեաւ ես պէտք է պատկուիմ: զիտեմ, երբ կինս գայ, տակնուգիւր կանի տունը, և այն ժամանակ կարգի կ'ընկնի:

* *

Երկու զօրավար սասահիկ թշնամութիւն ունէին միմեանց հետ: Պատերազմից յետոյ թագաւորը կամեցաւ վարձասպել երկուսին ևս, և նոցանից մէկին ասաց.

— Քեզ կամենում եմ վարձասպել քաջութեանդ համար, խնդրիր, ինչ կամենաս, միայն ընկերոջդ երկու անգամ աւելի պէտք է սամ քո խնդրածից:

— Հանիր իմ մէկ աչքս, — պատասխանեց զօրավարը:

* *

Փողոցում անց էր կենում մի մարդ, երեք մարդկային գանդ ձեռքին բռնած և ձայն էր տալիս.

— Քալա՛ եմ ծախում: քալա՛ առէք: Աի վաճառական գնեց այդ գանգերը, իսկ ներայ եղողներն սկսեցին ծիծաղել:

Վաճառականը վեր առաւ մի շամփուր և խղից
գանգի մէկ ականջը, ծայրը դուրս եկաւ միւս ական-
ջեց, և ասաց.

— Ես էն մարդն է, որ քարի խրատը մէկ ական-
ջով լսել է, միւսովս դուրս է թողել:

Կամփուրը խրելով երկրորդ զանգի ականջը,
հասաւ մինչև միւս ականջը, բայց ծայրը չդուրս
եկաւ, և վաճառականը շարունակեց.

— Ես էն մարդն է, որ գո՞նէ միքիչ լսել է խրատը:
Երրորդ զանգում խրելով, շամփուրը կանգնեց
զանգի մէջ տեղը, և վաճառականն ասաց.

— Ես էլ էն մարդն է, որ խրատը լսել է ու մըտ-
քումն է պահել:

* *

Ես այնքան սիրում եմ ձեզ, որ պատրաստ եմ
կեանքս զոհել ձեզ համար, — ասում էր երիտասար-
շը մի գեղեցիկ կնոջ:

— Ինչո՞ւ կեանքն էք զոհում, — ասաց կինը, — առ-
աելել լաւ է, զոհեցէք ձեր փողերը:

* *

Մի մարդու, որ փողի կարօտութիւն ունէր,
Ֆրանկինը զի՞ց հետևեալ նամակը.

Քայլելով, նաև առաջ առաջ առաջ առաջ առաջ
«Նամակում 20 ոսկի լրախ պէտքէ զանես: Միայն զի-
առենաս, որ այս գումարը ոչ թէ ընծայում եմ, այլ
ոքեղ փոխ եմ տալիս: Եթէ բանդ յաջողուի, փոխա-

նակ ինձ վերադարձնելու, տար, տուր քո ճանաշաճ
ամարդուն, որ կարօտութիւն կունենայ, այն պայ-
մանով, որ ինքն էլ աշխատի և միւնոյն կարգով տա-
նի մէկ ուրիշին տայ: Ողջ լեռ:»

22 Ապրիլ 1784.

Ֆրանկին:

* *

Ողէքսանդր-Մակեղոնացին, տեսնելով մի զին-
ուոր «Եղէքսանդր» անունով, որ շատ երկուա եր,
ասաց. «Կամ սիրադ փոխիր, կամ՝ անունդ:»

* *

Մ. Նասր-Էղդինը քաղաքումը մի ձմերուկ է առնում և վերադանում է իւր գիւղը: Ճանապար-
հին նսուում է մի տեղ, ձմերուկը կտրում է և ու-
տելով, ասում է ինքն-իրան. «Թող եկող-գնացող-
ներն ասեն, թէ այս չերտէ ռատուշ աղի- Տաղ է: Յե-
տոյ մի լաւ կլպում է և, ուտելով ասում է:» Թող
ասեն, թէ հետո ծտառոյ էլ է ռանեցել: Դորանից յե-
տոյ կեղեներն էլ է ուտում, ասելով. «Թող ասեն
թէ չերտէ ռատուշ էլ է ռանեցել: Վերջապէս, կո-
րիզները մէկ-մէկ գետնիցը հաւաքելով ուտում է և
ասում: Գէ, թող ասեն՝ հու էլ է ռանեցել:»

* *

ԴԱՏԱԽՈՐԸ: Դուք ինչո՞ւ ծեծեցիք ձեր կնօջը: Օ
ԱՄՈՒՍԻՆԸ: Ոչ ես նորան ձեռք չեմ տուել:

ԴԱՏԱԿՈՐԾ: Բայց նա երեք վկայ ունի, որոնք տեսաբը են ծեծելիս:

ԱՄՈՒՍԻՆԸ: Խսկ ես կարող եմ տասը վկայ բերել, որոնք չեն տեսել ծեծելիս:

* *

— Յաւիտենականութեան մէջ քանի՞ վայրկեան կայ, — Հարցրեցին մէկին:

— Մէկ երկրում մի սար կայ, — սպառասխանեց նա, — նորա բարձրութիւնը մի վերստ է. խորնութիւնը՝ մի վերստ և լայնութիւնը՝ մի վերստ: Հարիւր տարին մէկ անգամ մի թռչուն գնում է այն սարը և նորա գագաթի վերայ երկու անգամ քսում է իւր կտուցը: Երբ նորա քսելով, սարը բոլորովին կմաշուի, — այդ յաւիտենականութեան առաջին վայրկեանը կլինի:

* *

— Ես, ինչպէս տեսնում եմ, պէտք է ջուրն ընկնեմ՝ խեղդուեմ:

— Մի խեղդուիր, եզրայր, քեզ ասում եմ. թէ չէ, խեղդուիր, ինձ ինչ. յետոյ դու կ'փոշմանեա:

* *

Անգիացին հիւանդութեան վերջին բոպէներում ասում էր իւր խոստովանահօրը.

— Տէր-հայր, ինգրեմ պատուիրէք, որ իմ մահից յետոյ պատառեն իմ փորը և լաւ, ուշաղը թիւնով քննեն:

— Ինչո՞ւ, — Հարցրեց խոստովանահայրը:

— Որովհետեւ բժիշկները հակառակ կարծիքներ ունին իմ հիւանդութեան վերայ, պատասխանեց հիւանդը, ուստի և ես ցանկանում եմ իմանալ, թէ նոցանից ո՞րն աւելի ճշմարիտ է:

* *

Մէկ աղջեկ իւր սիրահարին գրեց հետեւեալ նամակը:

«Ինգրեմ, ուղարկի՞ր ինձ 100 մանեթ: Բայց զիաւենաս, որ ես շատ եմ ամառում մէկ այսպիսի առաջարկութիւն, անել քեզ: Թէպէտ ծառայիս ուղարկեցի, որ նամակս յետ բերէր, բայց արդէն ուշ մէր. փօստի ժամանակն անց էր կացել: Խնդրեմ, ձեմքիր»:

* *

Վաստիկ հարբած մարզը, անցնելով մաքսառան մօտից, ասաց մաքսաժողովին:

— Վտացիր ինձնից քեզ հասանելի մաքսը: Ես զինի եմ տանում:

— Կմի մէջ եղած գինուցը մաքս չենք առնում, պատասխանեց նա:

* *

1819 թուին Փարիզի արքունական գործերը շատ խառն զրութեան մէջ լինելով, շուտ-շուտ նախարարները փօստում էին: Մէկ աղքատ քաղաքացի իւր դռան վերայ կպցրեց հետեւեալ յայտարարու-

Թիւնը. Եթէ հարկաւորուից յայտնել ինձ, որ ես
արքունի գանձարանի նախարար եմ նշանակումը, և
ես տանը չլինի՛. ինդրում եմ, որ ինձ իմաց առն
զորա մասին ժօրմի գինեանը, ուր ես սովորաբար
ժամանակ եմ անց կացնում:

* *

— Ի՞նչ զանազանութիւն կայ թղուկի և փառ
ասբանի մէջ:

— Երկում էլ յած են:

* *

λ Դերձակի մօտ ինչ կտոր բերում էին, ամենից
էլ գողանում էր: Մի զիւեր գերձակը երազումը տե-
սաւ, որ իւր գողացած բոլոր կտորները կախուած
էին ծառի ծիւղից: Այս տեսիլքից վախեցած՝ նա
զարթեց, երազը պատմեց իւր աշակերտին և ասաց.

— Երբ տեսնես, որ ես որեւիցէ կտորից ու-
ղում եմ գողանալ, այն ծառը միտու բեր:

Մէկ անգամ սորա մօտ մի թանկադին ամա-
հուդ էին բերել, որ շոր կարէր նորանից: Աւելիս,
երբ գերձակը կամենում էր կարել, գողանալ իսկցին
աշակերտն ասաց.

— Ուստա, միտդ եմ բերում ծառը:

— Յիմար, էն ծառի վրայ, հօ, էս կտորից չկար,

ասաց գերձակը և գողացաւ իւր մասը:

* *

Գրինետանը:

ՊԱՐՏԱՏԵՐԸ: Ինձ այնքան փող ես պարտ, ոչինչ չես
տալիս. իսկ դու գինին շշով ես զլուխոդ
քաշում:

ՊԱՐՏԱՊԱՆԸ: Շատ լաւ ես ասում, եղբայր: Կինի
խմելս տեսնում ես, բայց սպասիր. փող
առլս էլ կ'աեսնեն:

* *

Առաւոտը վաղ-վաղ, մագործը գնումէ փառ-
ասբանի տունը և, նստելով նորա մօտ, ասում է.

— Պարտն, եթէ մի շուն իմ կրպակից միս փախ-
ցնի, ես ի՞նչ կարող եմ անել:

— Քու նորա տիրոջից կարող ես երեք մանեթ
պահանջել, — պատասխանեց փաստաբանը:

— Ուրեմն, — ասաց մագործը, — ինդրեմ, չնորհե-
ցէք ինձ երեք մանեթ. որովհետեւ երեկ առաւոտը,
ձեր շունն իմ կրպակից ահագին միս փախցրեց:

— Բայց, առաջ դու ինձ տասը մանեթ տուր, որ
քեզ օրէնքը սովորեցրի, յետոյ..., — ասաց փաստա-
բանը:

* *

Մէկը նստեց չոքած ուղափ վերայ. և երբ
ուզու բարձրացաւ, «մաք բարով, — ասաց նստողը,
երկինքն եմ գնում»:

* *

Մի հասարակութեան մէջ, նոր ուսում աւաբնած երիտասարդը, կամենալով ցոյց տալ իւր գիտութիւնը, ասաց. «Այս հաւատացած եմ, որ ոչ մի տեղ այնքան զանազան անցքեր չեն պատահում, որքան բոլոր աշխարհում»:

* *

Ուկը, կամենալով ամուսնանալ յայտարարութիւններ գրեց, որոնց մէջ յիշել էր իւր բոլոր լաւ յատկութիւնները: Նա իւր անձը վիճակախաղ էր ձգում: Դորա համար նա պատրաստել էր 50 տոմակ իւրաքանչիւր 400 մանեթանոց. ուրիմն ընդ ամենը՝ 20000 մանեթի: Նա առաջարկում էր, որ այն օրիորդը, որին կ'ընկնէր ինքը՝ այդքան գումար տար իւրեան: Խակ եթէ, օրիորդը չեր ցանկանալ ամուսնանալ իւր հետ, նա կ'ստանար այդ գումարի կէսը: Եռոտով ծախուեցան 45 տոմակ: Բաղդաւորապէս, տարու այն 5 տոմակներից մէկը, որոնք մնացին առանց ծախուելու: Եւ մեր փեսայացուն շահեցաւ 18000 մանեթ:

* *

—Ո՞ր գաղանն է աւելի վասնգաւոր, —հարցրին դիոզինէս փիլիսոփային:

—Ա այբենի գաղանների մէջ ամենավտանգաւորը բամբաստղն է, —պատասխանեց փիլիսոփան, —իսկ ընտանի գաղանների մէջ՝ կեղծաւորը:

* *

Տիկիննէ: Կարո՞ղ էք նկարել երեսիս կարմիութիւնը: Նկարիջը: Յցո ունիմ, աիկին, որովհետև կարպիր ներկը ես էլ միւնքն խանութից եմ առնում, որտեղից գուք բերել էք տալիս ձեզ համար:

* *

Մէկ աղքատ զարկեց Ս: Նայր-Էդգինի գուոր: —Ի՞նչ ես ուզում, —հարցրեց մօլան: —Ճած արի, ասելու բան ունիմ, —պատասխան տուեց աղքատը:

Մօլան ցած գնաց և. աղքատն ասաց. —Ուզումութիւն եմ ուզում: —Վ երեւ արի, —ասաց մօլան: —Երբ աղքատը բարձրացաւ սանդուղը, —Աստուած տայ, —պատասխանցե մօլան: —Եֆէնդի, —ասաց աղքատը, —ինչո՞ւ ցած եղած ժամանակը չասացիր ինձ այդ: —Դու էլ ինչո՞ւ վերև եղած ժամանակը ցած կանչեցիր ինձ, ... —ասաց մօլան:

* *

Պատերազմում, մի զօրապետ սաստիկ հարուած էր ստացել զիսումը: Վիրաբոյմը յայտնեց, որ շատ վուանգաւոր է, որովհետև զիսի ուղեղն երեւում է:

—Շատ ուրախ եմ, —պարո՞ն վերաբոյմ, —ասաց զօրապետը, —ինդըն՝ մի փոքր վեր առէք ուղեղցս և ուղարկեցէք մեր հրամանատարին: Նորան

Հաւատացրել են, թէ, իմ գլխումն ամենեին աղեղ
չկայ:

* *

Ա. Ոլսում գողութեան սաստկանալու պատ-
ճառով, սուլթանը հրամայեց, որ ոչ-ոք դիշերն ա-
ռանց լապտերի դուրս չ'գնար: Նոյն երեկոյին, մի
Յօյն լապտերը ձեռքին՝ գնաց փողոցը:
— Ո՞ւր է լապտերդ, — հալցրեց դիշերապահը:
— Չեռում է, — պատասխանեց Յոյնը:
— Ինչո՞ւ մոմ չ'կայ մէջը:
— Դորա մասին ոչինչ չէր ասուած, — պատասխա-
նեց Յոյնը:

Հետևեալ օրն առանձին հրաման հրատարա-
կուեցաւ, որ ամեն մարդ լապտեր ունենայ, մէջը
մոմ զրած: — Յոյնը դուրս գնաց փողոցը:
— Ո՞ւր է լապտերդ, — հարցրեցին նորսն:
— Չեռում է, — պատասխանեց նա:
— Մոմն ո՞ւր է:
— Մէջն է:
— Ինչո՞ւ չես վառել:
— Դորա մասին ոչինչ չէր ասուած:

Երրորդ օրը նոր հրաման հրատարակուեցաւ, որ
անից դուրս եկողը լապտեր ունենայ ձեռքին և մէջը
վառած մոմ: — Այս դիշերն արդեն Յոյնի լապտե-
րում վառած մոմ կար:

* *

Մէկն ընկել էր մի մեծ ցիսի մէջ և օգնութիւն
էր խնդրում: Բայց, տեսնելով, որ ոչ-ոք չէ կամե-
նում օգնել, ինքը բռնեց իւր գլխի մազերից և կա-
մենում էր իրան դուրս հանել ցիսի միջից:

* *

Սիրահարը նամակ զբեց իւր սիրականին, բայց
կամենալով ծածուկ պահել նորա անունը, առանց
հասցեի տարաւ փօստք:

— Բայց ի՞նչպէս է անունը, — հարցրեց փօստի
վերատեսուը:

— Զարմանալի՛ բան է, — ասաց սիրահարը, — որ
ամեն յիմար կամենում է իմանալ, թէ ով է իմ
սիրականը:

* *

Մէկը, պատահմամբ կոտրելով խանութի գռան
ապակին, խկոյն ներս մտաւ և, տալզ փողը խա-
նութպանին՝ խնդրեց, որ աւելնորդը (որ նոյնպէս մի ա-
պակու գին էր) իւրեան վերադարձնի: Բայց, որովհետեւ
խանութում մանր փող չէր ձարյում, ուստի նե-
ղութիւն մի քաշելը — ասաց նա խանութպանին. և
խկոյն կոտրելով միւս ապակին՝ աւելացրեց. ասհա,
վերջացաւ մեր հաշելը:»

* *

Ա. Նասր-Եգիշինին ասացին.

— Քո կինը դուրս արա. անամօթաբար ուրիշների
աներն է ման գալիս:

— Բաս մեր տունն ինչո՞ւ չի գալիս, — հարցրեց
մօլան:

* *

Կառքից ցած գողով, մէկը հարցրեց կա-
ռապանին.

— Ո՞ւրան արժի:

— 20 կոպէկ:

— Հա, ձի՞ն արժի, բայց ևս ման-ածելն եմ
հարցնում:

* *

Սոկրատէսը իւր զոան առաջեւը կանգնած՝ խօ-
սում էր ծանօթի հետ: Կինը, որ լուսամուտի ա-
ռաջեւը նստած էր, զարկեց ապակին, որ ամուսինը
ներս մտնէր: Բայց փիլիսոփան, ու շաղրութիւն չ' գարձ-
նելով, շարունակում էր խօսակցութիւնը: Կինը մի
քանի անգամ ևս զարկեց: բայց ամուսինը տուն
չ' գնաց: Նա, սաստիկ բարկանալով, թառը ջրով լոց-
րեց և կանգնեց զուն ետեր:

Երբ Սոկրատէսը, խօսակցութիւնն աւարտելով
տուն գնաց, խկոյն կինը թասով ջաւրը թափեց նո-
րա գլխին: Ամենելին չ' նեղանալով կնոջ արարմոն-
քից, Սոկրատէսն ասաց.

— Ամպերի այնքան զոռալուց յետոյ՝ անձրևի
գալը չեմ զարմանում:

* * *

ԵՊԻՍԿՈՊՈՍԸ: Վանի՞ պատուիրանք կայ:

ՏԻՐԱՅՈՒՆ: Տանումէկ:

ԵՊԻՍԿՈՊՈՍԸ: Ասա տամնումիերորդը:

ՏԻՐԱՅՈՒՆ: «Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրեա-
ջեք զմիմեանա:»

* *

Մէկը կորցրել էր իւր ոսկեայ ժամացոյցը.
բայց լրագրում յայտաբարութիւն էր տուել, թէ
արծաթեայ ժամացոյց է կորցրել: Երբ հարցրին
պատճառը, պատասխանեց: «Որովհետեւ, եթէ գրեի,
թէ ոսկեայ ժամացոյց եմ կորցրել գտնողն ինչ
չեր տայ»:

* *

Յիմարը նայելով մի գեղեցիկ շինութեան վե-
րայ, հարցրեց մօտից անցնողին. «Ես տունն էու-
տեղ է շինուածո:»

* *

ԵՐԻՑԱՍՈՒՐԻՔ: Տիկին, ես սիրում եմ ձեզ և թշլ
տուէք, որ առաջարկեմ ձեզ իմ սիրուր:

ՏԻԿԻՆՔ: Շատ լու. բայց ինպիեմ, առաջ փա-
թաթեցէք ձեր սիրուր բանկի տու-
սակում, յետոյ, ...:

* *

Լուգօվիկոս ԽՎ-ը մէկ անգամ հարցրեց իւր
մօտ ծաւայող մէկ իշխանի, թէ նա քանի որդի ունի:

— Զօրս, Զերդ Մեծութիւն, պատասխանեց իշխանը:
Երկրորդ և երրորդ անգամ պատահելիս կայսրը
կրկին նոյն հարցն առաջարկեց նորան և միշտ առաջ-
ջեն պատասխանն ստացաւ: Աերջապէս, երբ կայսրը
երեկոյին թուղթ էր խաղում, կրկին հարցրեց: Բայց
այս անգամ իշխանը պատասխանեց, թէ վեց որ-
դի ունի:

Ի՞նչպէս, — հարցրեց կայսրը, զարմանալով, —
կարծեմ; գու առաջ ասացիր, որ չըս որդի ունիս:

— Այսո, այդպէս է, Զերդ Մեծութիւն, ստաց
իշխանը, — բայց փախնում եմ, մի՛ գուցէ Զեզ
ձանձրութիւն տամ, միշտ միենոյն բանը կրկնելով:

* *

ՊՍՏԻԿՈՒՆԻ: Զէք տեսնում պատի վերայ կազրած
յայտարարութիւնը, որով խնդրում
են, որ թատրոնում ոչ ոք չծխի:

ՊԱՏՐՈՒՆԱՏԵՍՅՈՒ: Այսո, տեսնում եմ: բայց այդուամե-
նայնիւ ևս կարող եմ ծխել: որով-
հետեւ ինձ խնդրում են և ոչ հրա-
մայում:

* *

Հասակաւոր օրիորդն ասում էր մեկ երիտա-
սարդի:

Շատ ցաւում եմ, որ մօտենում եմ երեսուն
տարւան:

— Անհոգ կացէք, — պատասխանեց երիտասար-
դի: — ամեն օր հետ զհետէ կհեռանաք երեսունից:

* *

Մ. Նասր-Էդգինին մի գիւղացի մի նապաս-
տակ ընծայեց: Մօլան լաւ հիւրասիրեց նորան: Եր-
կու օրից յետոյ մօլայի տունը երկու ճանապար-
հարդ եկան:

— Դուք ո՞վ էք, — հարցրեց մօլան:

— Մէնք՝ քեզ համար նապաստակ բերողի զրա-
ցիներն ենք, — պատասխանեցին նորա:

Մօլան ոցա էլ պատուեց: Մի քանի օրից
յետոյ կրկին հիւրեր երեցան:

— Դո՞ք ով էք, — հարցրեց մօլան:

— Մէնք՝ քեզ համար նապաստակ բերողի զրա-
ցիների զրացիներն ենք:

— Ահ, բարով հկաք, — ստաց մօլան, և մէկ ա-
մանի մէջ տաք ջուր լցնելով, դրեց հիւրերի ա-
ռաջեր և ասաց:

— Ես էլ մեր նապաստակի շրի ջրովն է:

* *

Գիշերով բժշկին զարթեցնում են, որ գեղ գրի:
Բժիշկը զրում է գեղատոմակը. բայց, սիսթուելով,
25 զրամի փոխանակ 250 զրամի է զրում: Հիւանդը
գեղն ընդունում է և նոյն զիշերը մեռնում է: Հե-
տեւեալ օրը նորա ամուսինը գանգատվում է գատա-
տանին:

ԴԱՏԱՒՈՐԸ: ինչո՞ւ, դուք 250 գրամմ էք գրել
ԲԺԻՇԿԵԼ: Սխալուել եմ:
ԴԱՏԱՒՈՐԸ: Բայց դուք ինչո՞ւ տուեցիք այդքան
գեղը:
ԴԵՊԱՎՈՅԱՌԻԾ: Պ. դատաւո՞ր, դեղատոմակի վերայ
կարգալով, որ գեղը փօստի կառա-
վարչի համար է, ևս կարծեցի, որ չե՞-
համար կլինէր. ուստի պատրաստեցի
250 գրամմ, ինչպէս գրուած էր:

* *

Փօստումը ստացուեցաւ մի նամակ այս հաս-
ցէով. միմ սիրելի որդուն: Փօստի վերատեսուչը և
փօստալիօնը ծիծագեցին և նամակը մի կողմ ձգեցին:
Երեք օրից յետոյ մէկ երեխայ գնաց փօստը և հարցրեց.

— Իմ սիրելի մօրից նամակ չկաց:

— Ահա, սիրելի որդին, — ասաց փօստալիօնը և,
ծիծագելով նամակն իրան տուեց:

* *

Սակաավերը բուժ ածելիս սակրում էր մէկի
զլուխը և սաստիկ ցաւեցնում էր: Այդ միջոցին,
դրահ կովի բառաշեխը ձայն լաւեցաւ:
— Ինչի՞ ևս դպաւում, խեղճ անսառն, — ասաց
սակրավերը կարեկցութիւնով:
— Ով գիտի՝ էն խեղճի գլուխն էլ են ածելում; —
խօսեց սակրուողը:

* *

Մէկը վեճում էր քահանայի հետ այն հարցի
մասին, թէ արեգակը կանգնած է. իսկ երկիրը շարժ-
վում է:

ՔԱՀԱՆԱՆ: Արեր շարժվում է. որովհետեւ Ա.
Գրքում գրուած է երբ արել մայր
էր մանում, Յեսու-Նաւեան հրամայեց,
որ արեր կանգնի Քարաւան սարի
պլիսին:

ԱՇԽԱՐՀԱԿԱՆԸ: Այս, տէր-հայր, և հենց այն օրից
արեր կանգնած է:

* *

Երկու անգլիացի կառապան պատահեցին մի-
մեանց մի նեղ փոլցում և ոչ մէկը չէր կամենում
ճանապարհ տալ միւսին. Վերջապէս, նոցանից մէկը
կանգնեցրեց կառքը, հանեց զրպանից լրագիրը և
սկսեց կարգալ: Միւսը, ամենեւին չյուսահատուելով,
ձայն տուեց.

— Երբ վերջացնես կարգալը, խնդրեմ; ինձ տուր
լրագիրը:

* *

Միլոնը իւր երիտասարդութեան ժամանակ
շատ վայելչատեսիլ մարդ էր: Մէկ անգամ, նա զըօս-
նում էր քաղաքից դուրս, իւր ընկերուսանորների
հետ Յօդնած լինելով, նա պառկեց մի ծառի տուկը
և քնեց. իսկ ընկերները շարունակեցին ճանապարհը:

Մի քանի բոպէից յետոյ ծառի մօտ կանգ ա-
ռաւ մի կառք, որտեղից ցած իջան երկու կին և

կանգնած՝ հիմնում էին երիտասարդի գեղեցկութեան վերայ: Նոցանից մէկը, որ միւսից աւելի գեղեցիկն էր, մի թղթի կտորի վերայ գրեց մի քանի խօսք և զգուշութիւնով գրեց քնած մարդու ձեռքը: Խակոյն, երբ կանայքը հեռացան, ընկերները վազեցին, արթնացրին Միլտոնին և ցոյց տուին նորան թուղթը, որի վերայ գրուած էր Գվարինի գեղեցկահիւս ոստանաւորը.

„Occhi, stelle mortali,
„Ministri dei miei mali,
„Se chiusi m'uccidete,
„Aperti, che farete?“

Հայելէն.

«Աչքեր, մահուան աստղեր,
«Դմ վշտերի ատեղծողներ,
«Եթէ քնած ժամանակ ինձ սպանում էք,
«Դնչէք անիլ, երբ բաց լինէք:»

Այս ոստանաւորը, ինչպէս գաղտնի թոյն, թափանցեց Միլտոնի մէջ: Այդ օրուանից նա հանգաւառութիւն չունէր. անդադար որոնում էր այն գեղեցիկ անձանօթուհուն, — բայց իզուր: Նա գնաց իտալիա, բայց սխալուեցաւ. չ'գտաւ: Այդ ժամանակ նորագլխում ծնուեցաւ իւր Շիրախտ Կորուսեալը բանաստեղծութիւնը:

* *

Ա. Նասր-Էդգինը մի մորթէ գդակ էր ծածւկել: Ավտեսնում էր, հարցնում էր. մինչ ևս տուելու: Մօլան պատասխանում էր, թէ վեց շահի է տուել: Բայց շատ պատասխան տալուց նեղանալով, լուր տարածեց, թէ մօլան մեռել է: Այդ լուրը լսելով, շուտով նորա տունը մեծ բազմութիւն լցուեցաւ: Իսկ մօլան տան երդիկից ձայն տուեց ներսը. վեց շահով եմ առել գտակս, վեց շահով, վեց շահով:

* *

«Ասպօլէօն Լը, արշաւելով Նգիպառս, Ճաշին մնաց Նեյխ-էլ-Ֆայումի մօտ և խօսում էին զուռանի մասին: Նեյխները հաւատացնում էին, թէ մարդկային.. բոլոր գիտութիւնները պարունակուած են զուռաննում:»

— Բայց բացատրուած է նորա մէջ թնդանօթ ձուլմու և վառօդ շինելու արհեսար, — հարցլից նապօլէօնը:

— Այս, — պատասխանեցին նորան, — միայն հարկաւոր է գիտենալ թէ որտեղ պէտք է կարդացուի այդ:

* *

Կախաղանին մօտենալով, մարդասպանը ձայն տուեց.

— Եթէ ես մեղք եմ գործել, այդ բոլորովին ընդգէմ է եղել իմ կամքին:

— Այդպէս և այսօր, պէտք է խեղդեն քեզ ընդգէմ քո կամքին, — ձայն տուեց մէկը:

* *

ՊԱՐՏԱՏԵՐԸ: Եղայր, արի դատաստան գնանք. մինչ
և ե՞րբ պէտք է ինձ չարչարես և իմ
փողը չ'տա:

ՊԱՐՏԱՊԱՆԸ: Ես դատաստանից չեմ փախչում: բայց
ցուրտ է. ինդրեմ հագիդ վերարկուն
ինձ տուր և գնանք:

Պարտատէրը հանեց իւր վերարկուն,
պարտապանը հագաւ և գնացին դա-
տաւորի մօտ:

ԴԱՏԱԿՈՐԸ: Այ մարդ, ամօթ չի՞, որ սորա փո-
ղերը չես վերադարձում:

ՊԱՐՏԱՊԱՆԸ: Աղա ջան, ես սորան ոչ մի կօպէկ պարտ
չեմ: Սա էնպիսի մարդ է, որ օրը 1000
մարդի զըպարտում է, 2000-ի մատ-
նում է, 3000-ի ջառով է տալիս: Սա,
որ ուզենայ, էս րոպէիս ձեզ կ'հաւա-
տացնի, թէ իմ վերարկուս էլ իրանն է:

ՊԱՐՏԱՏԵՐԸ: Հապա իմն չէ, ումն է. 100 մանեթս
կերար, ուզում ես վերարկուս էլ ու-
տել:

ՊԱՐՏԱՊԱՆԸ: Ջեանը, աղա, խօսքս կատարուեց. քիչ
մնայ, քո շորերուն էլ տէր կ'դառնայ:

Պարտատէրը դուրս արուեցաւ, իբրև
զրպարտող մարդ:

* *

Հասարակական պարտիզում զըօնում էին զա-
նազան մարդիկ:

— Ի՞նչքան գեղեցիկ է այս կինը, — առաջ մէկն իւր
ընկերոջը, — օր հունիսի բնութիւնը, որ այսպէս առա-
տօրէն պարգևել է սորան այս գեղեցիկութիւնը:

— Ես գորան աւելի կ'հաւանէի, թէ ինքը հա-
ւատացած չ'լինէր, թէ գեղեցիկ է՝ պատասխան
տուեց միւսը:

* *

Տիկինը բժիշկ հրամիրեց:

— Զեր ի՞նչ տեղի է ցաւում:

— Ոչ մի տեղս չի ցաւում: Աւառմեմ, խմում
եմ և հանգիստ քնում եմ:

— Շատ լաւ, — առաջ բժիշկը, — ես ձեզ մէկ այն-
պիսի դեղ կ'տամ, որ դոցանից ոչ մէկը ձեզ չ'պա-
տահի:

* *

Մէկը սովորութիւն էր արել ման-գալիս միշտ
խօսել ինքնիրան:

— Պարոն, ի՞նչ է, պատճառը, որ դուք ձեզ ու ձեզ
խօսում էք, — հալցլոց մէկ անցաւոր:

— Ես, պարոն, միշտ և ամեն տեղ սիրում եմ
խօսել ի՞նչ մարդու հետ:

* *

Մըկու մարդ գանգատում էին իւրեանց խրդ-
ճութեան վերայ և մատածում էին, թէ ի՞նչ
հնարքով կարելի է բարոքել իւրեանց վիճակը:

— Մի բան է, մեռմ, սիրելիս, ...: Առնենք բոլոր

ծախոր. խղճմանքները այն գնով, ինչոր նոքա արժեն և յետոյ ծախինք այն գնով, ինչ որ իրանք գնահատում են իրանց.։ Աչա, այն ժամանակ մի բան կ'զառնաք։

— Զէ, եղբայր, մարդիկ խղճմանքի կարօտութիւն չունին, եթէ այդպէս անենք, շուտով կ'սնանկանանք։ Մի միջոց է մնում. — սպանել մի փողատէր մարդ։

* *

Հրաւերքում, ձաշից յետոյ խաղող բերեցին։ Ամենքը վեր առան մի-մի ձիթ (ողկոյզ). իսկ մեկը խալողի փոխանակ դինի խնդրեց։

— Ուրեմն, դուք գինին նախապատռում եք խաղողց, — հարցրին նորան։

— Ու թէ նախապատռում եմ, — պատասխանեց նա, — այլ ես սովորութիւն չունիմ դինին ռեշտուներէ (ՊԱԼՈՅԱ) ձեռով ընդունելու։

* *

Մէկը ներս է մանում իւր ծանօթի առւնը և առօւմ։

— Պարոն, ներեցէք, որ ձեզ անհանդիսաւ եմ առօւմ։

— Ի՞նչ էք կամենում։

— Ներեցէք, մի բան պէտք է խնդրեմ։

— Հրամայեցէք։

— Ներեցէք, եթէ ձեզնից տասը մանեթ խնդրեմ։

— Եատ բարի. ստացէք։

— Ենորհակալ եմ, ներեցէք, որ ձեր պարապահնքը խանգարեցի.։

— Ոչինչ։

— Մ'ենք բարով։

— Բայց, պարոն, ել ներողութիւն չէք խնդրում։

— Ինչի՞ համար։

— Եյնքան անթիւ ներողութիւն համար։

* *

Բաժիշկը, մոտարերելով իւր հիւանդը, որին երկար ժամանակ մոռացել էր, գնաց տեսնելու։

— Ուր էք գնում, — հարցրեց ծառան դռների մօտ։

— Հիւանդի մօտ, — ասաց բժիշկը։

— Նեղութիւն միք քաշել, — ասաց ծառան, — նա ինքն այս բոսկիս գուրս կ'գայ։

Եւ իսկոյն սենեակից գուրս եկաւ դագաղը, որին հետեւում էր մեծ բազմութիւն։

* *

Մ. Կասր-Եղիշնը իշխ վերայ նատած՝ առաջեւից մի քանի իշաններ էր քշում։ Յանկարծ բոլոր իշանները փախանու իսկ մօլլան սկսեց անխնայ ծեծել իւր հեծած իշխն։

— Մօլլա, — ասում են անցաւորները, — ախըր փախաջող գա չի, ինչի՞ ես դրան էղքան ծեծում։

— Եթէ սրան թաղնեմ, դիտէք, թէ ինչպէս է փախչէ, . . . , — ասաց մօլլան։

* *

Ժողովրդականները, միշտ միհենոյն քարոզը լսելով, ձանձրացել են. ուստի գանգաւուեցին կտպաստանին: Քահանան, որ ներկայ էր, ասաց:

— Խնդրեմ, հարցրեք, տեսնենք հասկացել են իմ քարոզը:

— Մենք ոչինչ չենք հասկացել — միաբերան ձայն տուին ամենըը:

— Եթե ոչինչ չեք հասկացել, — ասաց քահանան, — ևս եկող կիւրակի ևս պէտք է միենոյնը քարոզեմ:

*

*

*

ԱՄՈՒՍԻՆԸ: Այս գիշեր քեարոն գնանք:

ԿԻՆԸ: Խնչ են ներկայացնում:

ԱՄՈՒՍԻՆԸ: Մէկ այնպիսի պիհս, որ եսու դու երբեք չենք ունենալու:

ԿԻՆԸ: Խնունն ի՞նչ է:

ԱՄՈՒՍԻՆԸ: « Վասական են զարդարվելու:

*

*

ՊԱՐՏԱՏԵՐԸ: Պարսն, դռնէ այսօր տուեցեք ինձ, ինչոր պարտ եք. դուք խօստացոք, որ այսօր կապ:

ՊԱՐՏԱՊԱՆԸ: Այս, դուք ինձ բաւոկան ձանձրացրեք ձեր որսհանջներով. վերջապէս այդ անշաղաւալարութեաւ է:

*

*

Մի պարոն, արձակելով իւր աղախինը, տուեց նորոն ծառայութեան վեայական, որի մէջ զրել էր.

Անրանով յայտնում եմ ամենքին, որ իմ աղախին Մարփամ Գրիգորեանը ծառայեց ինձ մօտ երկու տարի. և այլքան ժամանակում երկեցաւ, որ նա սառադի սեր ունի ուտելու հետ, չտառակը է գոների մօտ, յստ ճանուար է արագի համը, չտիտոր է աշխատանքում, որուգ է իւր անձը արդարացնելում, հաւատորիմ է իւր սիրահարներին և ողջի է, երբ ամենքան փակուած է:»

*

*

Երբ ամուսինը վերագրձաւ օտարութիւնից, կինը առաջին բոլէներում անչափ ուրախացաւ: Բայց և շուտով սկսեց կոռել նորա հետ և հայոհցիլ: Սանամայրը, որ ներկայ էր այս տեսարանին, մի կողմը տանելով կոռւրար կնոջը, ասաց.

— Աննա, այդ ի՞նչ բնութիւն է. երբ ամուսինդ տանը չի լինում, լաց ես լինում. երբ գալիս է, հայութում ես:

— Ես այն պատճառով եմ լաց լինում, որ ամուսին բացակայ եղած ժամանակը, ոչոք չկայ, որ հետք կառեմ, — պատասխանեց կինը:

*

*

Մէկը պատահմանք կոխեց միւսի ոտը և փոխանակ ներողութիւն խնդրելու, ո՛հա ձայն տուեց և հեռացաւ:

— Կանքնեցէք, — կանչեց միւսը:

Անցաւորը կանգ առաւ և, զլիսորկը վեր առնելով, ասաց.

— Ես պարտաւոր էի ներողութիւն խնդրել ձեզ՝
ոից, բայց որովհեաւ շտագում էի, մոռացայ:

— Այդ ոչինչ, — պատասխանեց միւսը: Բայց այս
դիպուածում դուք իրաւունք չ'ունէիք «օհ» բղաւե-
լու, որովհեաւ այդ խօսքի գործածելու իրաւունքն
ինձ էր պատկանում:

* * *

— Ի՞նչպէս անեմ, որ գինի խմելիս չ'հարթեմ, —
հարցնում էր հարբեցողը:

— Պէտք է ասածին բաժակը չ'իմես, — պատաս-
խանեց բարեկամը:

* * *

Հարսը և փեսան երեք անդամ գնացին եկե-
ղեցի, որ պսակուին, բայց ոչ մէկ անդամ չ'յաջո-
ղուեցաւ, որովհեաւ փեսան միշտ հարբած էր լի-
նում: Երբ չորրորդ անդամ քահանան կրկին նկատեց,
որ փեսայացուն հարբած է, մի կողմ տարաւ հար-
սին և հարցրեց.

— Ի՞նչո՞ւ այնպիսի ժամանակ չէք դալիս, որ ձեր
փեսայացուն լուրջ լինի:

— Որովհեաւ նա միայն այն ժամանակն է հա-
մաձայնում ինձ հետ պսակուելու, երբ հարբած է
լինում, — պատասխանեց հարսը:

* * *

Մի նեղ փողոցով պէտք է անցնէին երկու
ասյլապան, որոնցից մէկը տակառով արաղ էր

տանում, միւսը՝ դագաղներ: Արաղ տանողն առաջեկից
էր գնում, և միւսին չէր ուզում ձանապարհ տալ:

— Այդ ի՞նչ ես տանում դու, — հարցրեց երկրորդը:

— Արաղ, — պատասխանեց առաջինը:

— Ո՞ս, եթէ այդպէս է, քշիր, ես կ'հասնեմ: Ես
դագաղներ եմ տանում: Քո տպրանքի գործածողներն
ինձ կարող են սպասել: Իսկ իմ ապրանքի գործա-
ծողներն քեզ չեն կարող սպասել: Դնա:

* * *

Երեխան, նայելով գեղձանիկներին, ասաց.

— Մայրիկ, ինչո՞ւ մէկը միշտ երգում է: Իսկ
միւսը միշտ լուռ է:

— Որովհեաւ մէկն արու է, միւսը՝ էդ: Արուն
երգում է, իսկ էգը — ոչ:

— Համ: Իմացայ: Կ'նշանակի, մայրիկ, զու արու-
նս, իսկ հայրիկը՝ էդ: Որովհեաւ երբ զու կովում ես
ու աղաղակում, նա ամեննեին ձայն չի հանում:

* * *

Հիւրանոցում, պարապ մահճակալ չ'դանելով,
մէկը պառկեց միենոյն մահճակալում, մէկ Արարի
կողքին. բայց առաջուց խնդրել էր իւր ընկերներին,
որ իւրեան վաղ զարթեցնէին, որովհեաւ շուտով
պէտք է ձանապարհ ընկնէր: Նա պառկեց և շու-
տով սկսեց խռորմիացնել իւր ու զրացու կողքին:

Ընկերները, կամենալով ծիծաղել նորա վերայ,
նորա բոլոր երեսին վակս (կօշկաներկ) քսեցին, այն-

պէս, որ նա շատ նմանում էր իւր սև դրացուն: Առաւօտը, ընկերները զարթեցրին մեր ճանապարհորդին: Նա քնաթաթախ հաջնում է կօշեները և մեքենայաբար մօտենում է պատի հայելիուն իւր փողակապը կապելու: Տեսնելով հայելիում իւր սև պատկերը, նա շատ զարմացաւ: ԱԱՅ քեզ յիմարներ, ասաց նա, — ես ինզրեցի, որ ինձ զարթեցնեն, իսկ նոքա Սրաբրին են զարթեցրիլ: Այս խօսքերն ասելով, նա կրկին հանեց շորերը և գնաց, ձգուեցաւ անկողնումը:

* * *

Թաղէս Փիլիսոփային հարցրին:

— Ան ո՞ր բանն է, որից աշխարհաւմն ամէն մարդ ունի:

— Քյոր, — պատասխանեց Փիլիսոփան, որովհետեւ նոքա էլ յոյս ունին, ուսնկ ոչինչ չունին:

* * *

Մ. Նասր-Էդղինը իւր կողծեց լսել էր, որ երբ մարդու ոտներն ու ձեռները սառչեն, շուտով կ'մեռնի: Մէկ անգամ, մօլոն գնաց անտառը փայտ կարելու և այնքան մրսել էր, որ ոտներն ու ձեռները սառել էին: Ուրիշն, աշակ մեռայ» — ասաց նա և պառկեց ծառի տակը: Գոյզերը մօլայի էշը մենակ տեսնելով, փազեցին և սկսեցին տոտել նորան: Մօլան պառկած տեղեց ձայն տուեց: «Թաքք ձիր որսը, կերեք, կերեք, իշի տէրը մեռել է»:

* * *

Մի շատ քաջ մարդու անուն բաւական հաջակուել էր: Մէկը, որ իւրեան ևս քաջ էր կարծում, գնաց նորա մօտ իւ ասաց. օն 40 վերսա հեռաւուրութիւնից եկել եմ քո քաջութիւնը տեսնելու. արի, կոռւենք, տեսնենք, ով կ'յազմուիր»: Քաջ մարդը հարի պէս բարձրացրեց նորան և նետեց միւս կողմը: Միւսը, պլորուելով կանաչ խոտերումը, սկսեց տնք-անքալ:

— Աչիւ, — պատասխանեց միւսը, — միայն խընդրեմ իմ ձին էլ էս կողմը զցիս:

* * *

Մէծն-Պետրոսը մէկ աղնուականի մի զործ էր յանձնել բայց աղնուականը պնդում էր, թէ, ոյդ գործը այլապէս պէտք էր կատարել: Այս միջոցին ներկայ էր Բալակիրէվը:

Հասկեալ որը թագու որի մօտ շատ աղնուականներ կոյին, որնց թւումն էր և յիշեալ աղնուականը: Մէծն-Պետրոս խօսք բաց արեց նախինիմաց օրուայ գործի մասին. ոմանք թագուորին էին պաշտպանում, ոմանք՝ աղնուականին: Եռւտով երեւցաւ այսակեղ Բալակիրէվը, բերելով իւր հետ մի հաւ և մէկ տման տառը ձուաներով: Առանց մի ձայն հանելու, նա ամանը զրեց սեղանի վերայ, իսկ հաւը բաց թողեց թագաւորի ոսների մօտ և տուեց նո-

բան մի զբաւոր խնդիր հաւի կողմից, որի մէջ հաւն ասում էր. «Թագաւոր, իմ ձուաները ոչ միայն չեն հնագանդում ինձ. այլ և համարձակվում են ինձ սովորեցնել։ Այս պատճառով, խնդրեմ, ուղարկեցէք այս ձուաները խոհարարի մօտ, և հրամայեցէք, որ մի լաւ ձուանեղ պատրաստի։

Այս խնդիրը թագաւորն առաջ ցած կարդաց, յետից՝ բարձր և հարցրեց ազնուականներին. «Արդեօք իմաստնաբար է զրուած այս նամակը հաւի բերանից»։ Ամենքը ծիծաղեցին և հաստատում էին զանգատի շշմարտութիւնը։ Իսկ թագաւորը խնդիրը տուեց վերայիշեալ ազնուականին և հրամայեց կատարել, ինչպէս զրուած էր։ Ազնուականը, որ լաւ հասկացել էր խնդրի իմաստը, կերտաւ առաջարկուած ձուանեղը. բայց ոչ ախորժակով։

* *

Մի քաղաք անձնատուր եղաւ թշնամուն։ Երկու եղայրը խնդրեցին զօրապեամին որ դեռ քաղաքը չ'այրած զուրս գնան և իւրաքանչիւր իւր ստացուածքից. այնքան բան տանի հետք. որքան կարող է շալակել իւր վերայ։ Զօրապետը համաձայնեց. և երկու եղայրներից մէկը շալակելով իօր հօր, միւսը՝ իւր մօրը, դուրս գնացին քաղաքից։

* *

Մի ծեր գիւղացի նստած էր իւր գաւան առաջեր և զլուխը խոնարհեցրած՝ նոյում էր մի փոք-

րիկ գրքի վերայ։ Նորա մազերը և մօրուքը փայլում էին արծաթի նման միայն նորա երկու կարմիր խընձորակները թրջիւմ էին պայծառ և վճիռ արցունքով։

— Ի՞նչ ես կարդում, ով ծերտնի, հարցրեց նորան մէկ ուսումնական, գու այբի հան ել ևս առել։

— Պարոն, ասաց գիւղացին, նայեցէք, այսաեղ ոչ այբ կայ, ոչ ֆէ. բոլոր թերթերը դատարկ են, միայն չսրս գոյն կայ այսաեղ. տեսէք, ինչ են նշանակում սոքա։ Առաջին գոյնը երկնակապոյան է, որ առում է. «Ո՞ւ Տարր, Ֆըշ վերև նոյն՛ր»։ Երկրորդը կարմիր, ինչպէս վարդը՝ յիշեցնում է Փրէչ տրէնը. երրորդը սպիտակ, ինչպէս մանուշակը, ասում է. «Մանուշ վարքի՛ր» և չորրորդը աև, ինչպէս թանաքը՝ յիշեցնում է ինձ Տահ։ Ահա, այս է սովորեցնում ինձ զիրքը։ Առիկ, մնջեկ, ուսումնականը շարունակեց իւր ձանապարհը։

* *

Մի Թուրք, որ իւր գիւղումը յայտնի էր իւր ձարտարախօսութիւնով, լսելով, որ մի հեռաւոր գիւղում ես կայ մէկը, որի անունը առաւել հուշակուած է, քան իւրը, — ձանապարհ ընկաւ գիւղի այն գիւղը, որ անձամբ կարողանայ անենել նորան և ձարտարախօսութեան մէջ հակամառելով նորա հետ, իմանայ, թէ ո՞րը իւրեանցից կ'գերազանցի։

Համանելով գիւղը, նա հարցրեց առաջին ան-

գամ պատահող մարդուն, թէ որտեղ է բնակվում
իւրեանց զիւղի համբաւաւոր ձարասարախօսը:
— Ուան-ման-ամ, բիլ-ման-ամ, — պատասխանեց
թուրքը: ⁽¹⁾

Այս խօսքերը ընդունելով իւրեանց տռաջին
նշանակութիւնով, նա հեռացաւ նորանից և, մօտե-
նալով մէկ ուրիշի, առաջարկեց միւնոյն հարցը:

Ճարտարախօսը հէնց նա էր, որի հետ գու այս
րոպէիս խօսում էիր, — պատասխանեց երկրորդը:

Այժմ, մօտածելով նորա ասած խօսքերի երկ-
րորդ նշանակութեան վերայ, մէր ձանապարհորդը
նոր հասկացաւ, որ ճարտարախօսի նոյն իսկ առա-
ջին խօսքերից յաղթուած էր ինքը: Ուստի, առանց
կրկին նորա հետ խօսելու՝ ուղերուեցաւ դէպի իւր
զիւղը: ⁽²⁾

* * *

— Ի՞նչպէս ես, բարեկամ:

— Աեծ կորուատ ունիմ:

— Ի՞նչ է պատահել:

— Կինս մեռաւ:

(1) Ուան-ման-ամ, բիլ-ման-ամ թուրքերէն խօս-
քերը երկու նշանակութիւն ունին.

1. «Չէ՞ ռանցամ, չէ՞ հասկասամ», 2. հանաշէր Ե՞ս էմ,
չասկացէր, Ե՞ս էմ»:

(2) Պատմում են, թէ Թուրքին պատասխան տուսողը
եղել է մէր „Թուրքինջան մականուն կրող աշուղը է, որի
անունը հռչակուած էր Պարսկաստանում:

— Բայց, չէ՞ որ դուք միշտ կոփւների մէջ էիք:
— Այդպէս է, բայց նա մէկ օրինակելիք կին էր:
Կաք գատիր. ինչո՞ւն է կայանում լաւ կող արժա-
նաւորութիւնը:

— Յայտնի բան է, նորանում, որ նա կատարի իւր
ամուսնի բոլոր ցանկութիւնները:

— Դէ, տեսնո՞ւմ ես: Իսկ ես վաղուց ցանկանում
էի ազատուիլ նորանից:

* *

Երբ ամերիկական „General America“ անու-
նով մեծ շոգենաւը խորուակուեցաւ Ասլանդեան ով-
կիանոսում, բոլոր նաւորդներից միայն երկու ամերի-
կացի ազատուեցին, որոնք ըսնեցին շոգենաւի փրշ-
րուած կայլից և տաս ժամից աւելի լողութէն ով-
կիանոսում: Ամենեին փրկութեան յոյս չունենալով,
նոցանից մէկը հարցրեց միւսին սառնասրտութիւնով.
Ամիրելիս, այս դիշեր մէնք որտեղ պէտք է քնինք»:

* *

Աղքատը, ոզորմութիւն ստանալով մի ակնո-
ցաւոր հարստից, միշտ ասում էր.

— Աստուած պահի ձեր քիթը!

— Բայց ի՞նչու չես խնդրում Աստուծուն, որ պա-
հի իմ աշքերս, — հարցրեց մէկ անզամ հարուսարը

— Ա՞ն, պարհ, — ասաց աղքատը, — եթէ քիթ
չունենաք, ակնոցը որտեղ կ'դնէք:

* *

Փլատը իւր մեծ դահլիճում միայն մէկ մոմ
էր վառում: Հիւրը ներս մտնելով այդ դահլիճը, իս-
կոյն գուրս եկաւ և ձայն տուեց ծառային. «Այտղայ.
մէկ ուրիշ մոմ բէր, որ այսաեղի վառած մոմը զբա-
նեմ»:

* *

Խնջոցում քերականութեան ուսուցիչը համա-
րեա, ամբողջ գիշերը լուռ էր: Կանայք, այս նկա-
տելով, հարցրին նորան:

— Խնջուն չէք խօսում, պարոն:

— Տիկիններ, — որոստասիանեց ուսուցիչը, — շատ
ձայնաւոր տառերի մէջ անպատճառ պէտք է, որ մի
բաղաձայն տառ լինի:

* *

Չեռնածուն լրագիրում հրատարակեց հետեւ-
և ալ յայտարարութիւնը. «Այս անգամ 20 կօպէկով
ես պէտք է ցոյց տամ մէկ այնպիսի էշ, որի գլուխը
պոչ տեղումն է. իսկ պոչը — գլխի պէղուն: Շուտով
հաւաքուեցաւ մեծ բազմութիւն: Եւ ի՞նչ տեսան
նոքա: — Մէկ էշ, որ կանգնած էր պոչը դէպի ախո-
ռը. իսկ գլուխը — գէպի ժողովուրդը:»

* *

Պրուսաց թագաւոր Ֆրիդրիխ Ա-ի մօտ տարան
մի զինուոր, որ եկեղեցում, Աստուածածնի պատ-
կերի վերայից պոկել էր վարագոյրը:

— Ի՞նչը ստիպեց քեզ այդպիսի անօրէնութիւն
անել — հարցրեց թագաւորը:

— Եատ դժուար զրութեան մէջ գտնուելով, —
պատասխանեց զինուորը, — ես օգնութիւն խնդրեցի
Աստուածածնից. արտասուք թափելով, ամբողջ գի-
շերն աղօթեցի նորա պատկերի առաջեւը և նա յան-
կարծ ձայն տուեց. «Անձ հարկաւոր չէ այդպիսի հա-
րուստ հագուստը. վեր առ իմ պատկերից և գործ
զի՞ր քո կարօտութիւնը լրացնելու:»

— Այս անդամ ներում եմ քեզ, — ասաց թագա-
ւորը, — բայց զի՞նչ կաց. այսուհետեւ այլ ես այդպիսի
բան չինդրես սուրբերի պատկերներից:

* *

Մի շատ վատ բժիշկ, թողնելով իւր արհեստը,
մտաւ քաղաքական ծառայութեան մէջ: Բայց և այս-
տեղ ցոյց տալով իւր ծուլութիւնը, հրաժարեցին
պաշտօնից:

— Աւելի վատ!, — ասաց նա, — շատ կարելի է, հինգ
հարիւր մարդ կորչի:

Հետեւալ օրը նորան կանչեցին ոստիկանները
և հարցրին.

— Ի՞նչ է նշանակում ձեր սպառնալիքը:

— Ես ոչ-ոքի սպառնալիք չեմ տուել, — պատաս-
խանեց նա, — այլ կամենում էի ասել, որ կրկն ձեռք
կտամ իմ առաջին արհեստին,

* *

Ուսումնական Զօնսօնին հարցրին.

— Ինչո՞ւ տգէտները աւելի ինքնասէր են, քան խելօք մարդիկը:

— Կոյրերը միշտ զլիներն աւելի բարձր են պահում, քան երկու աչք ունեցողները, — պատասխանեց Զօնսօնը:

* *

Անդլիայի թագաւոր Կարոլոս II-ը մէկ անգամ այցելեց դօկտօր Բօսբիի (Busby) ուսումնարանը՝ Դօկտօրը, ցցց տալով իւր ուսումնարանը, միշտ թագաւորի առաջելից էր ման զալիս, զլիսարկը ծածկած, մինչդեռ թագաւորը զլիսարկը ձեռքումն ուներ բըռնած: Ճանապարհ ձգելով թագաւորին, ուսումնարանի դռների մօտ, դօկտօրը վեր առաւ իւր զլիսարկը և խորին յարգանքով ասաց թագաւորին. «Ձերդ Մեծութիւն, յոյս ունիմ, որ Դուք կ'ներէք ինձ, որ ես իմ ուսումնարանում Ձեզ ամենեին պատիւ չտուի: Որովհետեւ, եթէ իմ աշակերտները զիտենան, որ ամբողջ տէրութեան մէջ ինձնից աւելի բարձր մարդ կայ, ես այլ ևս չեմ կարող կառավարուիլ նոցա հետո:»

* *

Կանանց հասարակութեան մէջ մի պարոն ասում էր.

— Ես չեմ հաւատում, որ կինը կարողանայ որ և է օրինակելի աշխատութիւն լցո ընծայել:

— Արդէն երեւումէ, պարօն. ձեզ կինն է լցո ընծայել — ասաց մի հեղինակուհի:

* *

Հռչակաւոր բժշկապետ Լօրրին ասում էր. «Ես ամենեին չեմ կարող պարծենալ, որ հիւանդ բժշկեցի: Ո՛չ: Ես հոգ տարայ հիւանդի վերայ. իսկ հիւանդութիւնն ինքն ըստ ինքեան անցկացաւ:»

* *

Մի քանի մարդկերանց մէջ մնապարծը զանազան զարմանալի բաներ էր պատմում իւր մասին. և վերջը հարցրեց մի կնոջ:

— Դուք ի՞նչ էք մտածում սորա վերայ:

— Մտածում եմ, որ դորանից յետոյ լսուեցաւ աքաղաղի կանչելու ձայնը և դուք զարթեցիք, — պատասխանեց կինը:

* *

Մի սաստիկ անձրեային օր, Ժլատը մի նամակ տուեց իւր աղախնին, որ տանէր փօստը: Բայց, նա չկարողանալով գնալ, խնդրեց մի տղայի.

— Գիւրդ, այս նամակը փօստը տար, քեզ մի կօպէկ կ'տամ:

— Ի՞նձ տուր կօպէկը և ես կ'գնամ փօստը, — պատասխանեց Ժլատը, որ լուսամուից լսել էր աղախնի խօսակցութիւնը:

* *

— Պարոն զու սագ գողացար:

— Ի՞նչպէս. մի՞թէ սա սագ է:

— Բաս ի՞նչ է. եթէ սագ չէ:
— Վերառ, եթէ այդպէս է. ես կարծում էի, բաղ է:

* *

Հարստնիքում, հարսի և փեսայի կենացը խմելով, մէկը վեր առաւ բաժակը և մի հանդիսաւոր կերպով սկսեց օրհնել նորտպակներին. «Թագաւոր՝ և թագուհի, շնորհաւորելով ձեզ ձեր առաջին օրինաւոր ամուսնութիւնը, ցանկանում եմ ձեզ, որ այս բաղաւորութիւնը կրկնուի»: *

* *

Թատրոնում:

— Ի՞նչ արժի առաջին կարգի տոմսակը:
— 25 ո.:

— Եւ կան յիմարներ, որոնք տոմսակներ են գնում:— Գրէթէ բոլորը ծախուած է:
— Ուրեմն, մի տոմսակ էլ ինձ տուէք:

* *

— Բանն այն է, որ երբ ես նորա երեսին ապտակ խփեցի, մի վկայ կար:

— Զէր կարող վկային էլ մէկ ապտակ խփել, անշնորհք:

* *

ԾԱՆՈՒՅԻ: Զարմանում եմ. ի՞նչպէս ես կարողանում այդքան գինի խմել:

ՀԱՐԲԵՑՈՂ. Գիտես, ինչ է: Երբ ես մի քանի բաժակ գինի եմ խմում, ուրիշ մարդ եմ գառնում. և մի թէ այն ուրիշ մարդըն էլ իրաւունք չունի մի քանի բաժակ խմելու:

* *

Մէկ այրի կին երկար ժամանակ գնում էր Սէնատը իւր հանգուցեալ ասուսնի ռոճիկը խնդրելու: Բայց միշտ նորան ասում էին. «Էգուց արի, մայրիկ»: Վերջապէս նա օգնութիւն խնդրեց Բալակիրէվից: Հետեւեալ օրը Բալակիրէվը սկ շորեր է հազցնում և վերան կացնում է փոքրիկ թղթեր, որոնց վերայ գրել էր. «Էգուց արի»: Նորան կանինեցրեց այն ճանապարհի վերայ, որտեղից պէտք է անցնէր թագաւորը:— Քալիս է թագաւորը և, տեսնելով կողը, շարցնում է.

— Այս ի՞նչ է նշանակում:
— Եգուց կ'իմանսա, Ալէքսէյ, — պատասխանում է Բալակիրէվը:

— Այս լոպէիս եմ կամենում, — աղաղակեց թագաւորը:

— Մէնք էլ շատ բան ենք կամենում, բայց իսկոյն չէ կատարվում, — ասաց ծաղրածուն: Խսկ դու առաջ մտիր խորհրդարանը և հարցրեց ատենագլարին, եթէ նա քեզ չի ասիլ «Էգուց», այն ժամանակ կ'հասկանաս, թէ ի՞նչ է նշանակում այս:

Թագաւորը, հասկանալով կատակի միտքը, ներտ
մոտաւ խորհրդարանը և բարկացած հաղցրեց.

— Ի՞նչ է ինդրում այս կինը:

— Դա շատ վաղուց է, որ գալիս է,—պատասխանեց ատենադպիրը, գունաթափու ելով,—բայց ժամանակ չկար յայտնելու Ձերդ Մեծութեանը:

Մեծն-Պետրոսը հրամայեց իսկըն կատարել կնոջ խնդիրը. և այնուհետեւ երկար ժամանակ այլ ևս չէր լսվում «Էզուց արի»-ն:

* *

— Ես այստեղ չեմ կարող ծառայել, պէտք է զնամ Պետրոսուրդ: Այնտեղ ես երկու անգամ աւելի շատ ոռձիկ կ'ստանամ, քան այստեղ:

— Իսկ այստեղ ո՞րքան էք ստանում:

— Ո՛չինչ

* *

— Ի՞նչպէս լզարել (նիշարացել) ես, եղալիս քեզ դժոխումն ել չեն ընդունիլ:

— Ի՞նչո՞ւ:

— Այնտեղ պէտք է տառանելը կը լսույնեմ. բայց դու ատամներ ել չունես:

* *

Հոչակաւոր Գալիէյն, իւր հարսանիքի օրը, ընկղմուցաւ զրքերի մէջ: Այդպէս անցկացաւ զիշերը: Վերջապէս, նորան յայտնեցին, թէ արդէն լուսանումէ, և նա հանգարա, գիրքը ձեռքին գնաց քնելու: Մտնելով ննջարանը, նա զարմացաւ, տեսնելով

իւր ամուսնուհին, և սառնութիւնով ասաց. «Ա՞յս,
ես, հօ, այսօր ամուսնացայ»:

* *

Լօնդօնի փողոցում մի ճանապարհորդ հարցը-
րեց մէկին:

— Զի՞ կարելի, որ ինձ ցոյց տաք բերդի ճանա-
պարհը:

— Եստ հեշտ է,—պատասխանեց նա, —կոսրիր
այդ ժամանակործի խանութի ապակին, գուրս քաշեր
մի ժամացոյց և ուղղակի քեզ այնտեղ կ'տանեն:

* *

Յայտնի անշնորհ բանստեղծ Ժան Բատիստ
Ռոււսոն, կարդալով Ոլտէրի մօտ իւր Անդրեանդիին
անունով ոտանաւորը, հարցրեց նորա կարծիքը:

— Ես կարծում եմ, որ այդ հասցէով դա երբէք
չի կարող տեղ համնել,—ասաց Ոլտէրը:

* *

— Անուշ արէք. եղէք, ինչպէս ձեր տանը,—ա-
սում էր տանտիկինը, հրաւիրելով հիւրուհուն թէյ
խմելու:

— Զէ, չէ,—ասաց տանտեայ որդին, վեր թրո-
շելով աթոռից:

— Ի՞նչո՞ւ:

— Եթէ մայրս այստեղ էլ լինի այնպէս, ինչպէս

առանը, ինձ էլ կ'ծեծի հօրս էլ,—պատասխանեց եւ
բեխան:

* *

Սայլակը հասնելով փօստի կայարանը, մի պա-
րոն մօտենում է ճանապարհորդին և, քաղաքավա-
րութիւնով ողջունելով, ասում է նորան:

—Պարոն, կարել՞ է մի բան ինդրել ձեզնից:

—Ի՞նչ էք կամենում, —հարցրեց ճանապարհորդը:

—Կամենում եմ ինդրել որ իմ վերաբերուս քա-
ղաք հասցնեք:

—Ուրախութիւնով, բայց դուք ի՞նչպէս պէտք է
յետ ստանաք:

—Շատ հեշտ է. եթէ կամենում էք, ես վերաբ-
երիս մէջ կ'մնամ:

—Աստեցէք, ուրիմ, ասաց ճանապարհորդը,
ծիծաղելով:

* *

—Դուք արգէն վաղուց ամուսնացած էք. ինչո՞ւ
որդի չունեք:

—Մեր ցեղն այսպէս է..., պապս էլ որդի չունեք:

* *

ԵՐԵՍԱՍԱՐԴԻ: Տիկին, կարող եմ օգտակար լինել ձեզ:
ԳԵՂԵՑԻԿ ԿԻՆԸ: Այո՛, ինչպէս հին օրացոյց.

* *

Անակսիմէօն փիլիսոփան իմանալով, որ Աղէք-
սանդր—Մակեղոնացին անթիւ զօրքով գնում է Լա-
մօակա՝ նորան սրի և կրակի կերակուր շինկու, գուրս
գնաց նորա առաջը քաղաքի դրսերի մօտ: Աղէք-
սանդր մօտածելով, որ իւր նախկին ուսուցիչ փիլի-
սոփան գնում է իւր մօտ քաղաքի փրկութեան
համար ինդրելու, չսպասելով նորա խօսքերին, ա-
սաց:

—Երդվում եմ Լուսնթագով (Խաղիտէր), Անակ-
սիմէօն, որ չեմ կատարիլ քո ինդիրը:

—Յագաւոր, —ասաց փիլիսոփան հանդարտու-
թիւնով, —ինդրում եմ, որ քանդէք այս քաղաքը:

Լոելով այդ անսպասելի ինդիրը և, չկամենա-
լով կոտրել իւր իօսքը, Աղէքսանդրը շուտով հեռա-
ցաւ քաղաքից իւր բոլոր զօրքով:

* *

—Լոել ես. ասում են՝ Կարապետը մեռել է:

—Ե՞ս, մէին ասում է մեռել է, միւն ասում է՝

կենդանի է: Աս ոչոքի չեմ հաւասում:

* *

Ֆրանցիսկ Լը հարցրեց Կաստէլլիանուս սրա-
խօսին, թէ արդեօք աղնուական է նա: Արախօսը
պատասխանեց.

—Անկասկած, յայտնի է Զերդ Մեծութեանը,

որ նոյի տապանում երեք ազնուական կար. բայց թէ
ես նոցանից ո՞րից եմ առաջ եկել չ'գիտեմ:

* *

Հարցրին մի խեղձ Անզիացու.

— Ի՞նչ երեք բան կուզես, որ ունենաս, քանի
որ կենդանի ես:

— Առաջին՝ ես Կ'ցանկանայի ունենալ այնքան
պօրտէր, որքան կարող եմ խմել:

— Ուրիշ:

— Երկրորդ՝ այնքան բօստիժիք, որքան կարող եմ
ուտել:

— Իսկ երրորդին:

— Երրորդը, — ասաց Անզիացին, մի փոքր մտա-
ծելով, — Էլե մի փոքր պօրտէր:

* *

Հոչակաւոր աստղաբաշխը անց էր կենում մի
գերմանական տիրապետող իշխանի մայրաքաղաքովը:
Իշխանը կամեցաւ տեսնել նորան: Ուսումնականը,
ներկայանալով պալատում, շատ ամաչեց պալատա-
կանների շքեղութեան մէջ: Տեսութիւնից յետոյ
իշխանն ասաց իւր շըջապատղներին.

— Զարմանալի է: Ո՞վ կ'մոտածէր, որ այսպիսի
մեծ աստղաբաշխը այսքան ամօթխած կ'լինէր հա-
սարակութեան մէջ:

— Զերդ Պայծառութիւն, — պատասխանեց արա-
խօսը, — նա բոլորովին շփոթուեց:

— Ինչո՞ւ:

— Որովհետև տեսաւ այսքան շատ աստղեր, որոնք
իւրեանց տեղերումը չեն:

* *

— Շնորհաւորիր ինձ, բարեկամ, այսօր կինս որ-
պի ծնեց:

— Տղայ:

— Աչ:

— Ուրեմն՝ աղջեկ:

— Այս. բայց դու ի՞նչպէս իմացար:

* *

Ա. Նասր-Եգելինը կորցրել էր իւր իշխ տօպ-
րակը և ներկայ Եղողներին հարցնում էր.

— Իշխ տօպրակը տուէք, թէ չ' իմացածս կ'ա-
նեմ, հաաաա:

— Լաւ. ի՞նչ պէտք է անես, — հարցրին նորան:

— Ոչինչ, — ասաց մօլան, — մի խուրջին ունեմ,
միջից կ'կտրեմ. մէկը կ'շնեմ իշխ տօպրակ. միւսն
էլ, հօ, տօպրակ է ու տօպրակ:

* *

— Ո՞ւմ հետ պակուեմ ես, երբ դու մեռնես, —
